ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայտերի ներկայացման ՀՐԱՎԵՐ

Մարտ, 2016 թ.

Բովանդակություն

ՀԱՅՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (էջ 3)

ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՎԱՐՁԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ (ներկայացվում է առանձին)

ՀԱՎԵԼՎԱԾ Բ – ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ (էջ 48)

ՀԱՎԵԼՎԱԾ Գ – ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ (էջ 51)

ՀԱՎԵԼՎԱԾ Դ – ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ (էջ 54)

ՀԱՎԵԼՎԱԾ Ե – ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԵՐ (էջ 58)

ՀԱՎԵԼՎԱԾ Զ – ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ (CV) ՁԵՎԱՉԱՓ (էջ 64)

ՀԱՎԵԼՎԱԾ Է – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՁԵՎԱՉԱՓ (էջ 67)

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Բաժին 1. Գնման առարկայի (Ծրագրի) ելքային պայմաններ.....636
1.1 Ընդհանուր դրույթներ 636
1.2 Ծրագրի իրականացում.....838

2 Բաժին 2. Ֆինանսավորման աղբյուրներ 10310
2.1 Ընդհանուր դրույթներ 10310

3 Բաժին 3. Հրավերի փաստաթղթերը, տեղեկատվության հավաքագրումը, պարզաբանումների գործընթացը և Հրավերի ժամանակացույցը..... 11311
3.1 Ներածություն 11311
3.2 Հրավերի փաստաթղթերը..... 11311
3.3 Անհամապատասխան Հայտեր..... 12312
3.4 Հրավերի պարզաբանումները և տեղեկատվության տրամադրումը 13313
3.5 Տարածքների այցելության կարգը 13313
3.6 Տվյալների սենյակ.....14314
3.7 Նախամրցութային հանդիպում (կոնֆերանս) 14314
3.8 Դիտողություններ Պայմանագրի նախագծի վերաբերյալ 14314
3.9 Հայտերի ներկայացման հրավերի փոփոխությունը 15315
3.10 Պարզաբանումներ ստանալու համար ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ կապի հաստատումը..16315
3.11 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունները 16316
3.12 Ժամանակացույց 17316

4 Բաժին 4. Հայտի ձևը և բովանդակությունը.....19319
4.1 Հայտի բովանդակությունը 19319
4.2 Տեխնիկական առաջարկ – Մաս I – Բիզնես ծրագիր և տեղեկություններ աշխատողների մասին.....20320
4.3 Տեխնիկական առաջարկ, մաս II – Հայտի ապահովություն..... 21321
4.4 Տեխնիկական առաջարկ, մաս III – Հայտի ներկայացման գրություն 23323
4.5 Տեխնիկական առաջարկ, մաս IV – Կոնսորցիումի համար անհրաժեշտ փաստաթղթերը և պահանջները..... 23323
4.6 Տեխնիկական առաջարկ, մաս V – Լիազորագրեր..... 23323
4.7 Տեխնիկական առաջարկ, մաս VI – Տպագիր տեղեկություններ 24324
4.8 Տեխնիկական առաջարկ, մաս VII – Տեղեկատվություն Հայտատուի կամ կոնսորցիումի մասնակցի ընկերությունների վերաբերյալ. 24324
4.9 Ֆինանսական առաջարկ 24324
4.10 Հայտը և վարձակալության պայմանագիրը 25325
4.11 Հայտը՝ որպես պարտավորեցնող առաջարկ 26326

4.12 Հայտերի ներկայացման հետ կապված ծախսերը ..... 26~~326~~
4.13 Գաղտնիություն ..... 27~~327~~
4.14 Հայտերը ընդունելու կամ մերժելու իրավունքը ..... 27~~327~~

5 Բաժին 5. Հայտերի ներկայացումը, ընդունումը և ստորագրումը 28~~328~~
5.1 Բնօրինակներ, պատճեններ և Հայտի ստորագրում ..... 28~~328~~
5.2 Տեխնիկական և ֆինանսական առաջարկների կնքումը և դրոշմավորումը ..... 28~~328~~
5.3 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը ..... 30~~330~~
5.4 Հայտերի վավերականության ժամկետը ..... 31~~331~~
5.5 Հայտի փոփոխությունը ..... 31~~331~~
5.6 Հայտի հետ կանչելը ..... 34~~334~~

6 Բաժին 6. Հայտերի բացումը և գնահատումը ..... 36~~336~~
6.1 Հայտերի բացումը ..... 36~~336~~
6.2 Տեխնիկական առաջարկների բացումը ..... 36~~336~~
6.3 Ֆինանսական առաջարկի բացումը ..... 37~~337~~
6.4 Հայտերի գնահատում ..... 37~~337~~
6.5 Տեխնիկական առաջարկների գնահատում ..... 38~~337~~
6.6 Ֆինանսական առաջարկների գնահատում ..... 40~~340~~
6.7 Համեմատության համար միջին սակագնի փոխակերպումը ..... 41~~341~~
6.8 Հայտերի վերջնական գնահատումը ..... 41~~341~~
6.9 Գնահատող հանձնաժողովի իրավունքը Հայտերի ուսումնասիրության և պարզաբանումներ պահանջելու առումով 41~~342~~
6.10 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Գնահատող հանձնաժողովի հետ կապ հաստատելը ..... 42~~342~~
6.11 Կաշառք և կեղծիք պարունակող գործողություններ ..... 42~~342~~
6.12 Շահերի բախում ..... 43~~343~~

7 Բաժին 7. Պայմանագրի կնքումը ..... 45~~345~~
7.1 Հաղթող ճանաչված Հայտատուն ..... 45~~345~~
7.2 Պայմանագիր ստորագրելու իրավունքի շնորհումը ..... 45~~345~~
7.3 Վարձակալության պայմանագրի ստորագրումը ..... 45~~345~~
7.4 Կատարողական երաշխիքը ..... 46~~346~~
7.5 Պայմանագիր չստորագրելու և Կատարողական երաշխիքը չներկայացնելու հետևանքները ..... 46~~346~~
7.6 Լիցենզիա ստանալու համար դիմելու պարտավորությունը ..... 46~~346~~

Հրահանգ Հայտատուներին

1 Բաժին 1. Գնման առարկայի (Ծրագրի) ելքային պայմաններ

1.1 Ընդհանուր դրույթներ

1.1.1 Գնման առարկա է հանդիսանում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցումը:

1.1.2 Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը բարեփոխումներ է իրականացրել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում՝ արձանագրելով նշանակալի արդյունքներ: Այս ոլորտում պետական - մասնավոր գործընկերության (ՊՄԳ) փորձի առումով Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում առաջատարներից մեկն է: Մասնավոր օպերատորների հետ կնքվել են կառավարման ու վարձակալության պայմանագրեր և կատարվել են ջրային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված մեծածավալ ներդրումներ: Արդյունքում, արձանագրվել է սպասարկման որակի նշանակալի բարելավում, ընկերությունների գործառնական ծախսերի կրճատում և եկամուտների աճ:

1.1.3 Ներկայումս, Հայաստանում գործում են հինգ ջրամատակարար ընկերություններ, որոնք կառավարվում են երեք մասնավոր օպերատորների կողմից: Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարումը փոխանցված է հետևյալ ընկերություններին՝

- «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն՝ վարձակալության պայմանագիր «Վեոլիա» ընկերության հետ, սպասարկում է մեկ միլիոն բնակչություն.
- «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերություն՝ կառավարման պայմանագիր «Սաուռ» ընկերության հետ, սպասարկում է 0.62 մլն բնակչություն.
- «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններ՝ կառավարման պայմանագիր «Էմ-Վի-Վի Դեկոն», «Էմ-Վի-Վի Էներջի» «Էյ-Ի-Ջի Սերվիս» և «Սաուռ» ընկերությունների կոնսորցիումի հետ (որը ղեկավարվում է վերջինիս կողմից՝ սկսած 2014 թ. հունվարի 1-ից), սպասարկում է 0.32 մլն բնակչություն:

1.1.4 Բոլոր այս ՊՄԳ պայմանագրերի ժամկետը լրանում է 2016 թվականին, և նախատեսվում է նոր մրցույթ անցկացնել, որը հնարավորություն կտա «երկրորդ սերնդի» բարեփոխումների իրականացման համար՝ հիմնվելով կատարված բարեփոխումների ձեռքբերումների վրա և ընդլայնելով բարեփոխումների շրջանակը: Նախատեսվող բարեփոխումները վերաբերելու են ջրային ռեսուրսների կառավարմանը, ոլորտի իրավական և կարգավորող շրջանակին ու սակագներին առնչվող հարցերին:

1.1.5 Սույն ընթացակարգի հաղթողին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (այսուհետ՝ «Գույք») վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»):

1.1.6 Պայմանագիրն ընդգրկելու է այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տասնհինգամյա ժամկետով ջրային համակարգերը կառավարելու, շահագործելու և պահպանելու համար: Նախատեսված ծառայությունները կառնչվեն թե՛ ներկայումս սպասարկման տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին, և թե՛ սպասարկման տարածքում պայմանագրի ընթացքում նոր կառուցված լրացուցիչ օբյեկտներին:

1.1.7 Սույն ընթացակարգի Հաղթող Հայտատուն ՀՀ-ում կիիմնի տեղական ընկերություն («Վարձակալ»), որը տասնհինգ տարի ժամկետով վարձակալության պայմանագիր կկնքի ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի («Վարձատու») հետ՝ սույն Հայտերի ներկայացման հրավեր («Հրավեր») Հավելված Ա-ում ներկայացված վարձակալության պայմանագրի նախագծով (այսուհետ՝ «Պայմանագրի նախագիծ») նախատեսված մատուցվելիք ծառայություններին վերաբերող հիմնական պահանջներին համապատասխան: Հաղթող Հայտատուի ընտրությունը («Ընտրության գործընթաց») կատարվելու է ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ կառավարության 2016 թ. [ամիս]ի [օր]-ի թիվ xx որոշմամբ սահմանված կարգով:

1.1.8 Վերջին տարիների ընթացքում Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները (տե՛ս Պայմանագրի նախագիծ, Հավելված 2) ուսումնասիրվել են տարբեր խորհրդատվական ընկերությունների կողմից՝ տեխնիկատնտեսական հիմնավորվածության, ինստիտուցիոնալ և մասնավոր ընկերությունների ներգրավման տեսանկյուններից: Ուսումնասիրությունների արդյունքները Հայտատուների համար հասանելի են Տվյալների սենյակում (Data Room): Հայտատուներին հասանելի այլ տեղեկատվական նյութերը կրում են զուտ տեղեկատվական բնույթ: Տվյալների սենյակում (Data Room) առկա, ինչպես նաև Հայտատուներին հասանելի դարձրած այլ տեղեկատվական

նյութերի արժանահավատությունը չի երաշխավորվում և դրանց վրա տարածվում են սույն Հրավերի Հոդված 3.11.2 -ի դրույթները:

1.2 Ծրագրի իրականացում

1.2.1 Պայմանգիր կնքելու վերաբերյալ որոշում ընդունելուց հետո, Հաղթած Հայտատուն պարտավոր է հիմնել ինքնուրույն իրավաբանական անձ («Վարձակալ»)՝ Վարձատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով: Հայտը ներկայացնելու ժամանակ Հայտատուն պետք է ընդամենը հաստատի իր մտադրությունը սույն Հրավերով նախատեսված ընկերության հիմնադրման և գրանցման վերաբերյալ: Հաղթած Հայտատուն պետք է երաշխավորի, որ հիմնադրվելիք ընկերությունը կունենա Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ իրավասություն, և որ այն կհամապատասխանի Կիրառվող Օրենսդրության բոլոր պահանջներին: ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն ՀՀ կառավարության անունից Հաղթած Հայտատուի կողմից հիմնադրված Վարձակալի հետ կկնքի պայմանագիր՝ ջրամատակարարման և ջրահեռացման Գույքը և ենթակառույցները վարձակալելու և սահմանված սպասարկման տարածքում վերոհիշյալ ծառայությունները մատուցելու վերաբերյալ՝ սույն Հրավերի 1.1.6 ենթակետում նշված ժամկետի համար: Վարձակալը պետք է վճարի Վարձակալության Վճար: Պայմանագրի Կատարողական երաշխիք ներկայացնելուց բացի, Հաղթած Հայտատուն նաև համաստորագրելու է Պայմանագիրը ու Վարձակալի հետ համատեղ և համապարտ պատասխանատվություն է կրելու Պայմանագրի պահանջների կատարման համար:

1.2.2 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն իր իրավասության շրջանակում Վարձակալին կփոխանցի սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի և ենթակառուցվածքների կառավարման, շահագործման և պահպանման լիազորությունները, ինչպես նաև տնօրինման և շահագործման հետևանքով առաջացող պատասխանատվությունը Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար:

1.2.3 Հայտատուն իր Հայտով առաջարկելու է սակագին, որը հանդիսանալու վարձակալության ամբողջ ժամանակահատվածում Բաժանորդների համար սակագների սահմանման հիմք: Վարձակալը ծառայություններ է մատուցում Վարձակալության պայմանագրի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված Լիցենզիայի պահանջների համաձայն:

1.2.4 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն, Գնահատող Հանձնաժողովի միջոցով ընտրում է Հաղթող Հայտատուին և, գնման ընթացակարգի արդյունքները, ինչպես նաև գնման ընթացակարգի

արդյունքներով կնքվելիք պայմանագրի նախագիծը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո, ստորագրում է Պայմանագիր Վարձակալի և Հաղթած Հայտատուի հետ:

1.2.5 Վարձակալի կողմից իր պայմանագրային պարտավորությունների կատարման հանդեպ վերահսկողություն իրականացնելու նպատակով Վարձատուն ընտրում է Անկախ Տեխնիկական Աուդիտոր:

2 Բաժին 2. Ֆինանսավորման աղբյուրներ

2.1 Ընդհանուր դրույթներ

2.1.1 Ներկայումս Ասիական Զարգացման Բանկի, Եվրոպական Միության, Եվրոպական Ներդրումային Բանկի, KFW բանկի, Համաշխարհային Բանկի և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից տրամադրված դրամաշնորհային և վարկային միջոցներով ՀՀ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում իրականացվում են մի շարք ներդրումային ծրագրեր: ՀՀ կառավարությունը մտադիր է շարունակել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը այս ոլորտում և 2016-2020 թթ. ակնկալում է շուրջ 200 մլն ԱՄՆ դոլարի ներդրումային ծրագրերի իրականացում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում:

3 Բաժին 3.Հրավերի փաստաթղթերը, տեղեկատվության հավաքագրումը, պարզաբանումների գործընթացը և Հրավերի ժամանակացույցը

3.1 Ներածություն

3.1.1 Սույն Հրավերով ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն պաշտոնապես հրավիրում է նախարակավորված ընկերություններին/ ընկերությունների կոնսորցիումներին («Հայտատու» կամ «Հայտատուներ») ներկայացնել մրցույթին մասնակցելու հայտ («Հայտ»), որը բաղկացած է առանձին տեխնիկական և ֆինանսական առաջարկներից:

3.1.2 Սույն ընթացակարգով Ընտրության Գործընթացն իրականացվելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ղեկավարությամբ գործող գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ «Գնահատող հանձնաժողով») կողմից, որը ձևավորվել է ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2015 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 151-Ա հրամանով՝ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և հաշվի առնելով ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 15-ի թիվ 1233-Ն որոշման դրույթները: Գնահատող հանձնաժողովը որոշումներ է ընդունելու Հայտերի գնահատմանն ու պայմանագրի շնորհմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Այնուհետև, Գնահատող Հանձնաժողովը ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացնի Հաղթած Հայտատուի հետ Պայմանագիր կնքելու իր առաջարկությունը:

3.2 Հրավերի փաստաթղթերը

3.2.1 Սույն Հրավերով սահմանվում են սպասարկման տարածքը, Վարձակալի կառավարմանը, շահագործմանն ու պահպանմանը հանձնվող գույքը, մատուցվելիք ծառայությունների նկարագրությունը, Ընտրության գործընթացի ընթացակարգերը, և Պայմանագրի նախագծի հիմնական պայմաններն ու պահանջները: Հրավերը բաղկացած է հետևյալ փաստաթղթերից.

(a) Հրավեր – նամակ.

(b) Հայտերի ներկայացման հրավեր.

(c) Հրավերի Հավելված Ա – Պայմանագրի նախագիծ, որը ներառում է՝

(i) Գործարքի ձևը,

(ii) Պայմանագրի ընդհանուր պայմանները,

(iii) Պայմանագրի ընդհանուր պայմանների հավելվածները.

(d) Հրավերի Հավելված Բ - Հայտի ապահովության ձև.

(e) Հրավերի Հավելված Գ – Գնային առաջարկի ձև.

(f) Հրավերի Հավելված Դ - Հայտի ներկայացման գրության ձև.

(g) Հրավերի Հավելված Ե – Տեղեկությունների տրամադրման ձևաչափեր.

(h) Հրավերի Հավելված Զ – Ինքնակենսագրության (CV) ձևաչափ.

(i) Հրավերի Հավելված Է – Ֆինանսական մոդելի ներկայացման ձևաչափ.

(j) Հրավերի կամ դրա հավելվածների լրացումներ, եթե այդպիսիք կտրվեն Գնահատող հանձնաժողովի կողմից:

3.3 Անհամապատասխան Հայտեր

3.3.1 Հայտատուն պետք է ուսումնասիրի Հրավերում ներկայացված բոլոր հրահանգները, պայմաններն ու պահանջները, օրինակելի ձևերը, մասնագրերը և Հրավերում պարունակվող այլ տեղեկատվությունը: Գնահատող հանձնաժողովը կարող է մերժել ներկայացված Հայտը, եթե Հայտատուն.

(a) Չի ներկայացրել Հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը, կամ

(b) Ներկայացրել է Հայտ, որը էապես չի համապատասխանում Հրավերի պայմաններին ու պահանջներին:

3.3.2 Սույն Հրավերի իմաստով 3.3 կետում նշված «էապես համապատասխանող» նշանակում է, որ Հայտը համապատասխանում է Հրավերով առաջադրված բոլոր պայմաններին և մասնագրերին առանց որևէ էական ձևափոխության, պայմանականության կամ վերապահման: էական ձևափոխություն, պայմանականություն կամ վերապահում են համարվում պայմանների այնպիսի ձևափոխումները, որոնց հետևանքով.

(a) Էականորեն փոխվում են պայմանագրի առարկայի շրջանակը, որակական հատկանիշները և պայմանագրային պարտավորությունների կատարման չափանիշները;

(b) չհամապատասխանելով հայտերի ներկայացման հրավերին՝ այս կամ այլ կերպ էականորեն սահմանափակում են ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի պայմանագրով նախատեսված իրավունքները կամ Հաղթող Հայտատուի պարտականությունները կամ

(c) որոնց անտեսումը գնահատելու ժամանակ անարդարացի կերպով կազդի Հայտին ներկայացվող պայմաններին բավարարած այլ Հայտատուների գնահատականների վրա:

3.4 Հրավերի պարզաբանումները և տեղեկատվության տրամադրումը

3.4.1 Մրցութային փաստաթղթերը ստացած Հայտատուն իրավունք ունի պահանջելու Հրավերի պարզաբանում, ինչը ներկայացվում է հետևյալ ընթացակարգով.

(a) Հրավերի պարզաբանումների վերաբերյալ հարցումները Հայտատուի կողմից պետք է ներկայացվեն փոստի կամ էլեկտրոնային փոստի միջոցով *Գնահատող հանձնաժողովին*՝ ստորագրված գրավոր փաստաթղթի տեսքով, սույն Հրավերի 3.10 կետում նշված փոստային հասցեով և էլեկտրոնային փոստի հասցեով, և

(b) բոլոր հարցումները պետք է ներկայացվեն հայերեն կամ անգլերեն (հայերեն թարգմանության հետ միասին)՝ սույն Հրավերի 3.12.1 կետում նշված վերջնաժամկետից առաջ:

3.4.2 Ստացված հարցումներին վերաբերող Գնահատող հանձնաժողովի գրավոր պատասխանները ներկայացվում են Հայտատուներին սույն Հրավերի 3.4.1 կետի համաձայն՝ առանց նշելու հարցումը կատարած Հայտատուի տվյալները: Կրկնվող կամ համանման մի քանի հարցումներ ստանալու դեպքում Գնահատող հանձնաժողովը դիտարկում է դրանք որպես մեկ հարցում և տրամադրում մեկ պատասխան:

3.5 Տարածքների այցելության կարգը

3.5.1 Ջրամատակարարման և ջրահեռացման տնտեսության և ենթակառուցվածքների գտնվելու տարածքների այցելության ժամանակացույցը և կարգը սահմանում է Գնահատող հանձնաժողովը: Տարածքների այցելությունը պարտադիր չէ Հայտատուների համար, սակայն Հայտերի նախապատրաստման և պայմանագրի ստորագրման ընթացքում անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար, որոշակիորեն խորհուրդ է տրվում Հայտատուներին մասնակցել այցելությունների:

3.5.2 Հայտատուների կողմից վարձակալվելիք տարածքների և դրանց վրա գտնվող տնտեսությունների և ենթակառուցվածքների ուսումնասիրության նպատակով Հայտատուներին, նրանց խորհրդատուներին և գործակալներին ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն կտրամադրի անհրաժեշտ թույլտվություններ: Թույլտվությունները կտրամադրվեն այն պայմանով, որ Հայտատուները, նրանց խորհրդատուները, գործակալները և աշխատակիցները կերաշխավորեն փոխհատուցել ՀՀ կառավարությանը և ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին (այսուհետ՝ Պետական

մարմիններ), նրանց խորհրդատուներին, գործակալներին և աշխատողներին ուսումնասիրության հետևանքով հասցված բոլոր այն վնասները, որոնք կառաջանան՝ վերջիններիս աշխատողների մահվան կամ նրանց վնասվածք պատճառելու և գույքը վնասելու հետևանքով:

3.5.3 Գնահատող հանձնաժողովը գրավոր արձանագրում է այցելություններին վերաբերող ամբողջ տեղեկությունները:

3.6 Տվյալների սենյակ

3.6.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի մասնաշենքում կարող է ստեղծվել Տվյալների սենյակ Հայտատուներին և նրանց ներկայացուցիչներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու համար, որի մասին Հայտատուները լրացուցիչ կտեղեկացվեն և որը հասանելի կլինի Հայտատուներին Հրավերի 3.12.1 կետով սահմանված ժամկետում:

3.6.2 Տեղեկատվության տրամադրումը Հայտատուներին կկատարվի Գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

3.7 Նախամրցութային հանդիպում (կոնֆերանս)

Սույն Հրավերի 3.12.1 կետի համաձայն ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն կազմակերպում է Նախամրցութային հանդիպում (կոնֆերանս) նույն կետում սահմանված վայրում և ժամկետում: Նախամրցութային հանդիպումը (կոնֆերանսը) կազմակերպվում է Հայտատուներին տեխնիկական նյութերի ներկայացման և Հրավերի դրույթների սեղմ քննարկման նպատակով: Նախամրցութային հանդիպումը (կոնֆերանսը) հնարավորություն կտա Հայտատուներին առաջարկություններ ներկայացնել Պայմանագրի և կատարվելիք աշխատանքների շրջանակի վերաբերյալ: Մասնակցությունը Նախամրցութային հանդիպմանը (կոնֆերանսին) պարտադիր չէ Հայտատուի համար և չմասնակցելու հետևանքով նրա կողմից ներկայացված Հայտը չի կարող մերժվել (որակազրկվել):

3.8 Դիտողություններ Պայմանագրի նախագծի վերաբերյալ

3.8.1 Պայմանագրի նախագծի վերաբերյալ դիտողությունները և դրանում առաջարկվող փոփոխությունները/լրացումները կարող են ներկայացվել առանձին պարզաբանումներին վերաբերող հարցումների գրություններից, և դրանց վրա պարտադիր պետք է լինի «Դիտողություններ Պայմանագրի նախագծի վերաբերյալ» գրառումը:

3.8.2 Ծառայությունները կմատուցվեն կողմերի միջև մրցութային գործընթացի ավարտից հետո կնքվելիք Վարձակալության պայմանագրի դրույթներին համապատասխան:

3.8.3 Հայտատուները կարող են խնդրել Գնահատող հանձնաժողովին պարզաբանել, մեկնաբանել կամ փոփոխել Պայմանագրի նախագծի ցանկացած հոդված կամ կետ: Նման դեպքերում ցանկալի է, որ Հայտատուները իրենց հարցումների և առաջարկությունների հետ միասին ներկայացնեն նաև առաջարկվող փոփոխությունների տեքստային ձևակերպումները:

3.8.4 Սույն Հրավերի 3.8 կետում նշված հարցումներն ու առաջարկությունները պետք է ներկայացվեն Գնահատող հանձնաժողովին սույն Հրավերի 3.12.1 նշված ժամկետից ոչ ուշ:

3.8.5 Գնահատող հանձնաժողովը Հայտատուներին կարող է տրամադրել Փոփոխված պայմանագիրը «Պայմանագրի փոփոխության» առանձին փաստաթղթի տեսքով ոչ ուշ, քան սույն Հրավերի 3.12.1 կետով սահմանված ժամկետում: ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն չի պարտավորվում հաշվի առնել Հայտատուների կողմից ներկայացված բոլոր առաջարկությունները և կարող է դրանք մերժել ամբողջությամբ կամ մասնակի: ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն՝ ստացված առաջարկությունների հիման վրա, իրավունք ունի պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք իր հայեցողությամբ կհամարի անհրաժեշտ և բավարար՝ ի պատասխան ստացված առաջարկությունների:

3.8.6 Պայմանագրի վերաբերյալ բանավոր հնչած որևէ պարզաբանում, մեկնաբանություն կամ փոփոխություն չի կարող կաշկանդել Գնահատող հանձնաժողովին և հիմք չի կարող հանդիսանալ Հայտատուի համար:

3.9 Հայտերի ներկայացման հրավերի փոփոխությունը

3.9.1 Մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալը ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն կարող է ցանկացած պահի փոփոխություններ կատարել Հայտերի ներկայացման հրավերում՝ Հայտատուներին համապատասխան հավելվածների կամ լրացումների ներկայացման միջոցով: Որևէ այլ կերպով Հրավերը չի կարող փոփոխվել:

3.9.2 Այս կապակցությամբ ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից Հայտատուներին ներկայացված ցանկացած հավելված սույն Հրավերի 3.2 բաժնի դրույթներին համապատասխան կհամարվի մրցութային փաստաթղթերի անբաժանելի մաս:

3.9.3 Ներկայացված հավելվածներին ծանոթանալու և ներկայացվելիք հայտերում դրանք հաշվի առնելու համար Գնահատող հանձնաժողովը՝ սույն Հրավերի 3.12.1 կետի համաձայն կարող է ողջամիտ ժամկետով երկարաձգել հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

3.10 Պարզաբանումներ ստանալու համար ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ կապի հաստատումը

Ընտրության գործընթացի ընթացքում պարզաբանումներ կամ տեղեկատվություն ստանալու համար Հայտատուները կարող դիմել միայն Գնահատող հանձնաժողովին՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարի միջոցով: Հայտատուները կարող են դիմել Գնահատող հանձնաժողովին սույն Հրավերի 3.12.1 կետով սահմանված վերջնաժամկետից առաջ՝ գրավոր դիմելով՝

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
Արայիկ Մնացականյան,
Գնահատող հանձնաժողովի քարտուղար, ՀՀ ԳՆ ՋՏՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսական բաժնի պետ, վարչության պետի տեղակալ
Հայաստանի Հանրապետություն,
քաղ. Երևան, 0010 Վարդանանց փողոց 13ա
4-րդ հարկ, 401-րդ սենյակ
Հեռախոս՝ +374-10-540229, +374-91-329056
Էլ. Փոստ՝ arayik.mnatcakanyan@gmail.com

3.11 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունները

3.11.1 Յուրաքանչյուր Հայտատու պատասխանատու է Հայտի նախապատրաստման համար իր կողմից իրականացված անկախ հետազոտման, ֆինանսական վիճակի ուսումնասիրության, դիտարկման և այլ տեսակի աշխատանքների, այլ անկախ խորհրդատվական աղբյուրների հայթայթման, ինչպես նաև պայմանագրերի բանակցման և դրան հաջորդող՝ Վարձակալության պայմանագրով նախատեսված բոլոր ծառայությունների մատուցման համար:

3.11.2 Ընտրության գործընթացի ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն կամ նրա խորհրդատուները, գործակալները և աշխատողները որևէ պատասխանատվություն չեն կրում սույն Հրավերում առկա տեղեկատվության լրիվության և արժանահավատության համար: Ընտրության գործընթացի ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն և Գնահատող հանձնաժողովը, նրանց խորհրդատուները, գործակալները և աշխատողները պատասխանատվություն չեն կրում որևէ անհատի կամ ընկերության առջև սույն Հրավերում առկա տեղեկատվության օգտագործման համար:

3.11.3 Հայտատուները չեն կարող հենվել ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Գնահատող հանձնաժողովի, նրանց խորհրդատուների, գործակալների և աշխատողների բանավոր հնչեցված հայտարարությունների / կարծիքների վրա:

3.12 Ժամանակացույց

3.12.1 Գնահատող հանձնաժողովի գնահատմամբ, Ընտրության գործընթացը կտևի մոտ 6 - 7 ամիս՝ սկսած Հրավերի հրապարակման օրվանից մինչև հաջողակ Հայտատուի («Հաղթող Հայտատու») որոշման պահը: Ստորև ներկայացվում է Հրավերի հրապարակման պահից մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում մրցութային գործընթացի մոտավոր ժամանակացույցը[1].

Գործողություն	Ժամկետ
Հայտերի ներկայացման հրավեր (տրամադրում Հայտատուներին)	
Տվյալների սենյակի բացում	Հրավերի տրամադրումից 5 աշխատանքային օր հետո
Նախամրցութային հանդիպում (կոնֆերանս)	Հրավերի տրամադրումից 25 օր հետո
Հրավերի, այդ թվում Պայմանագրի նախագծի վերաբերյալ հարցումների և առաջարկությունների ներկայացում	Հրավերի տրամադրումից 45 օր հետո
Հրավերի, այդ թվում Պայմանագրի նախագծի վերաբերյալ ստացված հարցումների և առաջարկությունների պատասխանների ներկայացում	Հրավերի տրամադրումից 50 օր հետո
Տարածքների այցելության և տվյալների սենյակից օգտվելու վերջնաժամկետ	Հրավերի տրամադրումից 45 օր հետո
Հայտի ապահովության գումարի չափը որոշելու համար փոխարժեքի ընդունումը	Հրավերի տրամադրումից 40 օր հետո
Հայտերի ներկայացման և տեխնիկական առաջարկների բացման վերջնաժամկետ	Հրավերի տրամադրումից 85 օր հետո
Տեխնիկական առաջարկների գնահատում	Հրավերի տրամադրումից 99 օր հետո
Տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների հաստատում	Հրավերի տրամադրումից 106 օր հետո
Ֆինանսական առաջարկների բացում	Հրավերի տրամադրումից 113 օր հետո
Ֆինանսական առաջարկների գնահատում և գնահատման արդյունքների հաստատում	Հրավերի տրամադրումից 127 օր հետո

[1] Սույն ժամանակացույցում, մինչև Հայտերի ներկայացման հրավերը Հայտատուներին ուղարկելը, Գնահատող հանձնաժողովի կողմից կարող են կատարվել փոփոխություններ (օրինակ՝ հստակ օրերի ամրագրում և այլն)՝ հիմնականում պահպանելով ժամանակացույցով նախանշված ժամանակային շրջանակը: Հայտատուներին ուղարկվելիք Հրավերի տեքստում ժամանակացույցը սահմանափակվելու է Հայտերի ներկայացման վերջնաժամկետով:

Բանակցություններ	Հրավերի տրամադրումից 142 օր հետո
Պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշման ընդունում	Հրավերի տրամադրումից 192 օր հետո
Պայմանագրի ստորագրում	Հրավերի տրամադրումից 199 օր հետո

Ծանուցումներ: Եթե վերը ներկայացված ժամանակացույցում նշված օրերից որևէ մեկը լինի ոչ աշխատանքային, ապա այն տեղափոխվում է հաջորդ աշխատանքային օրվան:

Գնահատող հանձնաժողովն իր հայեցողությամբ և առանց Հայտատուներին նախապես զգուշացնելու կարող է փոփոխել Հրավերի 3.12.1 կետում նշված ժամանակացույցը: Հայտատուներին խորհուրդ չի տրվում ղեկավարվել սույն Հրավերի 3.12.1 կետում ներկայացված մոտավոր ժամանակացույցով, իսկ Գնահատող հանձնաժողովը որևէ պատասխանատվություն չի կրում մոտավոր ժամանակացույցի փոփոխության հետևանքով ի հայտ եկած հանգամանքների համար: Հայտատուներն անմիջապես գրավոր կերպով կտեղեկացվեն Ժամանակացույցում կատարված փոփոխությունների մասին:

4 Բաժին 4. Հայտի ձևը և բովանդակությունը

4.1 Հայտի բովանդակությունը

4.1.1 Յուրաքանչյուր Հայտատու պետք է ներկայացնի մեկ հայտ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը.

(a) Մեկ տեխնիկական առաջարկ, որը բաղկացած է հետևյալ Մասերից՝ ըստ հերթականության.

(i) Մաս I - Հրավերի 4.2 կետում պահանջվող տեղեկատվություն.

(ii) Մաս II - Հրավերի 4.3 կետում պահանջվող Հայտի ապահովություն.

(iii) Մաս III - Հայտի 4.4 կետում պահանջվող Հայտի ներկայացման գրություն.

(iv) Մաս IV - **անհրաժեշտության դեպքում՝** Հրավերի 4.5 կետում պահանջվող *Համատեղ գործունեության Պայմանագիրը* և կոնսորցիումի բոլոր մասնակիցների լիազորագրերը.

(v) Մաս V - Հրավերի 5.1.3 կետում պահանջվող լիազորագիրը.

(vi) Մաս VI - Նախապես հրատարակված նյութեր (ըստ հայեցողության).

(vii) Մաս VII -Տեղեկություններ Հայտատուի կամ /կոնսորցիումի դեպքում/ մասնակից ընկերությունների վերաբերյալ.

(b) Մեկ ֆինանսական առաջարկ, որը բաղկացած է հետևյալից.

(i) Հրավերի 4.9.2 կետի պահանջներին համապատասխան լրացված գնային առաջարկի ձև.

(ii) Հայտարարագիր Հրավերի 4.9.5 կետում նկարագրված կոմիսիոն վճարների և փոխհատուցումների մասին.

(iii) Հրավերի Հավելված է-ում ներկայացված Ֆինանսական կանխատեսումների և ֆինանսական հոսքերի մոդել («Ֆինանսական մոդել»):

4.1.2 Հայտատուի Հայտը պետք է կազմված լինի հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում, երկու տեքստերի միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերենին: Հայտատուները պետք է ներկայացնեն.

- Հայտի մեկ բնօրինակ անգլերեն լեզվով և մեկ պատճեն.

- Հայտի մեկ բնօրինակ հայերեն լեզվով (առանց նախապես տպագրված ստանդարտ փաստաթղթերի՝ բրոշյուրների և այլն) և յոթը պատճեն.
- Անգլերեն և հայերեն լեզուներով Տեխնիկական առաջարկի էլեկտրոնային տարբերակը CD-ROM-ով.
- Անգլերեն և հայերեն լեզուներով Ֆինանսական առաջարկի (ներառյալ՝ ֆինանսական մոդելը) էլեկտրոնային տարբերակները CD-ROM-ով:

4.2 Տեխնիկական առաջարկ – Մաս I – Բիզնես ծրագիր և տեղեկություններ աշխատողների մասին

4.2.1 Տեխնիկական առաջարկի Մաս I –ը բաղկացած է հետևյալ ենթամասերից հետևյալ հաջորդականությամբ.

(a) Հայտատուի կողմից Պայմանագրի նախագծի Պայմանագրի ընդհանուր պայմանների հավելված 6-ում՝ «Կատարողական չափորոշիչներ, որակի նկատմամբ պահանջներ և տուժանքներ» ներկայացված պահանջների իրականացման համար առաջարկվող ընթացակարգերը / գործառույթները նկարագրող *բիզնես ծրագիր: Բիզնես Ծրագիրը պետք է բաժանված լինի հետևյալ ենթաբաժինների.*

(i) («*Ընկերության ղեկավարումը*» ենթաբաժինը, որը նկարագրում է Պայմանագրի ընդհանուր պայմանների Հավելված 2-ում ներկայացված “*Ծառայությունների նկարագրությունը*” փաստաթղթով նախանշված ծառայությունների պատշաճ մատուցմանն ուղղված Հայտատուի ռազմավարական ծրագիրը, և

(ii) “*Կատարելագործում և արդիականացում*” ենթաբաժինը, որը նկարագրում է Հրավերով սահմանված պայմանների շրջանակում Հայտատուի առաջարկությունները ղեկավարման համակարգի, աշխատանքի կազմակերպման, ջրամատակարարման և ջրահեռացման տնտեսության և ենթակառուցվածքների կատարելագործման և արդիականացման վերաբերյալ: Այս ենթաբաժնում Հայտատուն պետք է պարզաբանի թե ինչ միջոցներ է նախատեսում ձեռնարկել գործառնական արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես է պատրաստվում կատարելագործել մատուցած ծառայությունների դիմաց հաշիվների ներկայացման և սպառողների սպասարկման ծրագիրը, ինչ եղանակներով է պատրաստվում կրճատել ջրի կորուստները, ապահովել ջրամատակարարման կայունությունը, բարելավել ջրաչափման ճշգրտությունը և այլն:

(b) Աշխատակազմի մանրամասն ծրագիր («Աշխատակազմի ծրագիր»), որը նկարագրում է ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատակազմի ձևավորման վերաբերյալ Հայտատուի առաջարկությունները, և բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից.

(i) «*Աշխատակազմի դիագրամ*», որը գրաֆիկորեն ներկայացնում է ընկերության ղեկավար խմբի հանգուցային պաշտոնները (յուրաքանչյուր պաշտոնի համար ներկայացվում են. պաշտոնի նկարագիրը, այդ պաշտոնի համար նախատեսված անձի տվյալները, ծառայությունների մատուցման ընթացքում այդ պաշտոնյայի աշխատավայրը),

(ii) «*Աշխատողների վերապատրաստում*», որը բացահայտում է Հայտատուի պատկերացումները աշխատողների վերապատրաստման վերաբերյալ,

(iii) «*Աշխատողների մասնագիտական պատրաստվածություն*», որն ամփոփ աղյուսակների միջոցով ներկայացնում է ղեկավար անձնակազմի բոլոր առաջարկվող պաշտոնների նկարագիրը, դրանց համար նախատեսված պաշտոնյաների մասնագիտական հատկանիշների, աշխատանքային փորձի տարիների թիվը և փորձառության ոլորտները: Նշված տեղեկությունները պետք է ներկայացնել սույն Հրավերի Հավելված Ե-ում ներկայացված *Տեղեկությունների փրամադրման (*2A) և (2B) ձևերին համաձայն, և

(iv) Ինքնակենսագրություններ (CV), որտեղ տեղադրված են Հրավերի Հավելված Ե-ում ներկայացված ձևաչափով կազմված բոլոր պաշտոնյաների ստորագրված CV-ները:

4.2.2 Հիմնական ղեկավար պաշտոնների ցանկում պետք է ընդգրկված լինեն վարձակալության առաջին տարվա ընթացքում երկու ամսից ավելի աշխատող անձինք:

4.2.3 *Բիզնես Ծրագրին* համահունչ *ֆինանսական մոդելը* պետք է տարեկան կտրվածքով ներկայացնի ծառայությունների մատուցման ընթացքում *Հայտատուի* կողմից կատարվելիք ծախսերը՝ Հրավերի Հավելված Է-ում ներկայացված ձևաչափով: *Ֆինանսական մոդելը* պետք է ներկայացվի որպես *Ֆինանսական Առաջարկի* մաս:

4.3 Տեխնիկական առաջարկ, մաս II – Հայտի ապահովություն

4.3.1 Տեխնիկական առաջարկի Մաս II-ում յուրաքանչյուր Հայտատու պետք է ներկայացնի 300,000 եվրո կամ այլ ազատ փոխարկելի արժույթով դրան

համարժեք գումարի չափով հայտի ապահովություն («Հայտի ապահովություն»): Համարժեք գումարի հաշվարկման հիմք է ընդունվում սույն Հրավերի 3.12.1 կետում ներկայացված ժամանակացույցով սահմանված օրվա դրությամբ **The Financial Times**-ի կողմից հրապարակված այլ արժույթների նկատմամբ եվրոյի միջին փոխարժեքը:

4.3.2 Հայտի ապահովությունը ներկայացվում է Հայտատուի կողմից ընտրված հեղինակավոր բանկի բանկային երաշխիքի ձևով: Բանկային երաշխիքը պետք է կազմված լինի սույն Հրավերի Հավելված Բ-ում ներկայացված ձևաչափին համաձայն: Հայտատուն պետք է երաշխավորի, որ Հայտի ապահովությունը ուժի մեջ կմնա Հայտի վավերականության վերջնաժամկետից հետո 28 օրվա ընթացքում, իսկ Հրավերի 5.4.2 կետի համաձայն Գնահատող հանձնաժողովի կողմից Հայտերի վավերականության ժամկետի երկարաձգման դեպքում՝ երկարաձգված վերջնաժամկետից հետո 28 օրվա ընթացքում:

4.3.3 Սահմանված պահանջներին չհամապատասխանող Հայտի ապահովություն ներկայացնելու դեպքում Հայտատուի Հայտը կորակավորվի որպես մրցույթի պայմաններին չհամապատասխանող և կմերժվի Գնահատող հանձնաժողովի կողմից: Մրցույթին կոնսորցիումով մասնակցելու դեպքում Հայտի ապահովությունը ներկայացվում է կոնսորցիումի բոլոր մասնակիցների անունով:

4.3.4 Մրցույթում հաղթող չճանաչված Հայտատուների կողմից ներկայացված Հայտի ապահովությունները չեղարկվում կամ հնարավորինս շուտ ժամկետում (բայց ոչ ուշ, քան Հայտի ապահովության ժամկետի լրանալուց հետո 28-րդ օրը) վերադարձվում են Հայտատուին:

4.3.5 Հայտի ապահովությունը կվերադարձվի հաղթող ճանաչված Հայտատուին սույն Հրավերի 7.3.2 կետի համաձայն Պայմանագիր ստորագրելուց և Պայմանագրում ու Հրավերի 7.4 կետով նախատեսված Կատարողական երաշխիքը ներկայացնելուց հետո:

4.3.6 Հայտի ապահովությունը չի վերադարձվում, եթե՝

(a) Հայտատուն՝ բացառությամբ սույն Հրավերի 5.6 կետով սահմանված դեպքերի, հետ է կանչում իր հայտը.

(b) Հայտատուն չի ընդունում սույն Հրավերի 6.6.4 կետով նախատեսված ուղղումները, կամ

(c) Հաղթող ճանաչված Հայտատուն սահմանված ժամկետում՝

(i) չի ստորագրում Պայմանագիրը սույն Հրավերի 7.3.2 կետով սահմանված կարգով, կամ

(ii) չի ներկայացնում սույն Հրավերի 7.4 կետով սահմանված Կատարողական երաշխիք:

4.4 Տեխնիկական առաջարկ, մաս III – Հայտի ներկայացման գրություն

Տեխնիկական առաջարկի Մաս III-ում յուրաքանչյուր Հայտատու պետք է ներկայացնի Հայտի ներկայացման գրություն՝ սույն Հրավերի Հավելված Դ-ում ներկայացված ձևաչափով:

4.5 Տեխնիկական առաջարկ, մաս IV – Կոնսորցիումի համար անհրաժեշտ փաստաթղթերը և պահանջները

4.5.1 Ընկերությունների յուրաքանչյուր կոնսորցիում («Կոնսորցիումով Հայտատու») սույն Տեխնիկական առաջարկի մաս IV-ում պետք է ներկայացնի՝ կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի լիազորված անձի կողմից ստորագրված համատեղ գործունեության պայմանագիր, որը, մասնավորապես՝

(a) հաստատում է կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի նվիրվածությունը կոնսորցիումին և համաձայնությունը Հրավերի 4.5.1 կետով Կոնսորցիումին վերապահված առաքելությանը և գործառույթներին.

(b) հաստատում է կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի պատրաստակամությունը ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին ներկայացնել երաշխիքներ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը համատեղ և համապարտ պատասխանատվությամբ ներգրավվելու վերաբերյալ.

(c) սահմանում է թե կոնսորցիումի որ մասնակիցը՝

(i) կստանձնի կոնսորցիումի առաջատար/ գլխավոր մասնակցի դերը՝ հանդես գալով կոնսորցիումի այլ անդամների անունից, և

(ii) լիազորված կլինի պարտավորություններ ստանձնել կոնսորցիումի բոլոր մասնակիցների անունից:

4.5.2 Եթե հաղթող ճանաչված Հայտատու ընկերության կամ կոնսորցիումի մասնակից ընկերության կողմից Տեխնիկական առաջարկի Մաս VII-ի (Հրավերի Հավելված Ե – «Տեղեկությունների տրամադրման ձևաչափեր») համաձայն ներկայացված հավաստագրերը, հավատարմագրերը և այլ փաստաթղթերը տրված են մասնակից ընկերությունների մայր ընկերությունների անունով, ապա Գնահատող հանձնաժողովը կպահանջի, որ այդպիսի մայր ընկերությունները հանդիսանան պայմանագրի կողմ՝ պայմանագիր համաստորագրելու միջոցով:

4.6 Տեխնիկական առաջարկ, մաս V – Լիազորագրեր

Յուրաքանչյուր Հայտատու Տեխնիկական առաջարկի մաս V–ում պետք է ներկայացնի Հրավերի 5.1.3 կետով սահմանված լիազորագիր:

4.7 Տեխնիկական առաջարկ, մաս VI – Տպագիր տեղեկություններ

Եթե Հայտատուն ցանկանում է ներկայացնել տպագիր տեղեկատվական նյութեր Հայտատուի կամ Կոնսորցիումով Հայտատուի մասնակիցների վերաբերյալ, դրանք պետք է ներառվեն միմիայն Տեխնիկական առաջարկի մաս VI–ում:

4.8 Տեխնիկական առաջարկ, մաս VII – Տեղեկատվություն Հայտատուի կամ կոնսորցիումի մասնակցի ընկերությունների վերաբերյալ

4.8.1 Տեխնիկական առաջարկի Մաս VII–ը բաղկացած է հետևյալ ենթամասերից հետևյալ հաջորդականությամբ.

(a) Սույն Հրավերի Հավելված Ե-ում ներկայացված Ձև (1A)-ին համապատասխան պատրաստված Ընդհանուր Տեղեկատվություն Հայտատուի կամ Կոնսորցիումով Հայտատուի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ և Ձև (1B) համապատասխան պատրաստված Համառոտ տեղեկատվություն կոնսորցիումի վերաբերյալ.

(b) Սույն Հրավերի Հավելված Ե-ում ներկայացված Ձև (3A)-ին համապատասխան պատրաստված Տեղեկատվություն նախկինում կայացած դատական գործընթացների վերաբերյալ:

4.9 Ֆինանսական առաջարկ

4.9.1 Յուրաքանչյուր Հայտատուի կողմից ներկայացվող Ֆինանսական առաջարկը պետք է բաղկացած լինի հետևյալ փաստաթղթերից.

(a) սահմանված կարգով լրացված Հայտի Գնային առաջարկի ձևը,

(b) Հայտարարագիր վճարված կոմիսիոն վճարների և այլ փոխհատուցումների մասին,

(c) Ֆինանսական կանխատեսումներ և ֆինանսական հոսքերի մոդել («Ֆինանսական մոդել»):

4.9.2 Յուրաքանչյուր Հայտատուի կողմից պետք է ներկայացվի՝ սույն Հրավերի Հավելված Գ-ում ներկայացված Գնային առաջարկը: Գնային առաջարկը պետք է լրացված լինի ամբողջականությամբ՝ խստորեն պահպանելով ներկայացված ձևաչափը:

4.9.3 Հայտատուի Ֆինանսական առաջարկը պետք է բաղկացած լինի՝

- **<u>Բազիսային սակագներից</u>**, որոնք կճշգրտվեն ՀԾԿՀ–ի 2016 թ. մարտի 9-ի թիվ 41Ա որոշմամբ սահմանված կարգով, և որոնք Վարձակալի կողմից կգանձվեն Բաժանորդներից վարձակալության Ժամկետի ընթացքում.

Հայտատուն պետք է իր կողմից առաջարկվող Բազիսային սակագները գնանշի մատակարարվող ջրի մեկ խորանարդ մետրի հաշվով՝ ՀՀ դրամով: Բազիսային

սակագինը պետք է ներառի ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններին առնչվող ծախսերը (այն չափով, ինչ չափով նշված է Հրավերում):

4.9.4 Ֆինանսական առաջարկում պետք է հաշվի առնված լինեն հարկերը, տուրքերը, մաքսավճարները և այլ պարտադիր վճարները (բացառությամբ ԱԱՀ-ի):

4.9.5 Յուրաքանչյուր Հայտատու Ֆինանսական առաջարկում պետք է ներկայացնի մանրամասն տեղեկություններ Հայտի ներկայացման և պայմանագրի ստորագրման համար Հայտատուի գործակալներին վճարված կոմիսիոն վճարների և այլ փոխհատուցումների (եթե այդպիսիք եղել են): Ենթադրվում է, որ այդ վճարները ներառված են Ֆինանսական առաջարկում: Նշված վճարների վերաբերյալ Հայտատուն ներկայացնում է գործակալների անուններն ու հասցեները, նրանց վճարված գումարները և վճարման արժույթը և վճարման նպատակը: Եթե նշված վճարները չեն կատարվել, Հայտատուն դրա մասին տեղեկություն է տրամադրում Ֆինանսական առաջարկում: Յուրաքանչյուր Հայտատու Ֆինանսական առաջակի հետ պետք է ներկայացնի նաև Ֆինանսական մոդելը:

4.10 Հայտը և վարձակալության պայմանագիրը

4.10.1 Հայտատուների Հայտերը պետք է հիմնված լինեն Պայմանագրի նախագծում ներկայացված պայմանների վրա: Չսահմանափակելով վերը շարադրված դրույթների համընդհանրությունը Հայտատուն պետք է ներկայացնի՝

(a) սակագնի իր առաջարկը հիմք ընդունելով Պայմանագրի նախագծում ներկայացված պայմանները, և

(b) Հայտը, հիմնվելով այն ենթադրության վրա, որ վերջնական Պայմանագիրը կունենա նույն տեսքը, ինչ Պայմանագրի նախագիծը:

4.10.2 Հայտատուները չպետք է ներկայացնեն այնպիսի Հայտեր, որոնք ներառում են Հրավերի պահանջներին չհամապատասխանող դրույթներ: Եթե Գնահատող հանձնաժողովը հայտնաբերի նման դրույթներ, ապա նա Հայտատուից կպահանջի ներկայացնել Հրավերի ոգուն համահունչ պարզաբանումներ: Պարզաբանումներ չներկայացնելու դեպքում Հայտատուի հայտը կմերժվի:

4.10.3 Հայտատուն իրավունք չունի ներկայացնել ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Հայտատուի միջև այնպիսի հարաբերություններ հաստատող Հայտ, որը Գնահատող հանձնաժողովի կողմից կորակավորվի որպես Հրավերի պահանջներին հակասող Առաջարկ (Այլընտրանքային առաջարկ): Գնահատող հանձնաժողովը նպատակ ունի ապահովել Հրավերով նախատեսված պայմանագրի կնքումը: Հայտատուների ընտրության գործընթացի վրա ազդելու միջոցով այլ փոխհարաբերություններ հաստատելու

ցանկացած Հայտատուի փորձը կարող է հանգեցնել Գնահատող հանձնաժողովի կողմից նրա որակազրկմանը: Եթե Հայտատուն ներկայացնի Այլընտրանքային առաջարկ այն կվերադարձվի Հայտատուին, իսկ Հայտատուն՝ Գնահատող հանձնաժողովի հայեցողությամբ, կորակազրկվի:

4.10.4 Մինչև հայտերի ներկայացումը բոլոր Հայտատուները պետք է ուսումնասիրեն Հայաստանի Հանրապետությունում գործարարությամբ զբաղվելու համար ընկերությունների գրանցման և այլ պայմանների համար անհրաժեշտ իրավական պահանջները:

4.11 Հայտը՝ որպես պարտավորեցնող առաջարկ

Հայտատուի հայտը՝

(a) Պարտավորեցնող առաջարկ է, որը ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն Գնահատող հանձնաժողովի միջոցով և իր հայեցողությամբ կարող է ընդունել մինչև սույն Հրավերի 5.4.1 կետով սահմանված Հայտերի վավերականության վերջնաժամկետը, և

(b) Հրավերի 4.11(a) կետի համաձայն կշարունակի մնալ պարտավորեցնող առաջարկ, անկախ ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Հայտատուի միջև ցանկացած այլ պայմանագրի շրջանակում ընթացող գործառույթներից:

4.12 Հայտերի ներկայացման հետ կապված ծախսերը

4.12.1 Հայտատուն պետք է հոգա Հայտի պատրաստման և ներկայացման հետ առնչվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ Հայտատուի կողմից հետևյալ գործառույթների ներգրավվածության մասով առաջացող ծախսերը՝

(a) այցելություններ տարածքներ և ուսումնասիրություններ,

(b) այցելություններ տվյալների սենյակ, այլ տեղեկատվական աղբյուրներից օգտվելը,

(c) ասուլիսներ,

(d) Գնահատող հանձնաժողովին ներկայացվող պարզաբանումների և տրված հարցերին պատասխանների պատրաստումը,

(e) Գնահատող հանձնաժողովին ներկայացվող հարցերի պատրաստումը, և

(f) Պայմանագրի ֆորմալացումը:

4.12.2 Անկախ Ընտրության գործընթացի արդյունքից ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն ֆինանսական պատասխանատվություն չի կրում

Հայտատուի առջև Հայտի պատրաստման և ներկայացման հետ առնչվող ծախսերի մասով:

4.13 Գաղտնիություն

4.13.1 Հայտատուի Տեխնիկական առաջարկի բացումից հետո մինչև մրցույթի ավարտը և Հաղթող Հայտատուի ընտրությունը ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն և Գնահատող հանձնաժողովը չի բացահայտի այլ Հայտատուների և Ընտրության գործընթացում չներգրավված այլ անձանց ցանկացած տեղեկություն, որն առնչվում է՝

(a) Հայտերի ուսումնասիրությանը, պարզաբանումներին և գնահատմանը,

(b) Պայմանագիրը շնորհելու վերաբերյալ արված առաջարկություններին:

4.13.2 Հայտատուները ընդունում են սույն Ընտրության գործընթացի հանրային գործընթաց լինելու փաստը և չնայած Հայտերի գաղտնիությունը պահպանելու ուղղությամբ պետական մարմինների ջանքերին, վերջիններս որևէ պատասխանատվություն չեն կրում Հայտերի բովանդակությունը հանրությանը հայտնի դառնալու համար:

4.14 Հայտերը ընդունելու կամ մերժելու իրավունքը

Մինչև Պայմանագրի ստորագրման վերաբերյալ որոշում ընդունումը, ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն Գնահատող հանձնաժողովի միջոցով ցանկացած պահի և իր հայեցողությամբ կարող է՝

(a) ընդունել Հայտը,

(b) մերժել ցանկացած Հայտը,

(c) Չեղյալ համարել Ընտրության գործընթացը և մերժել բոլոր Հայտերը,

(d) Չեղյալ համարել Ընտրության գործընթացը և կազմակերպել նոր գործընթաց,

(e) ուշադրություն չդարձնել Հայտերի մեջ տեղ գտած՝ նյութական ձևափոխություն չհանդիսացող շեղումների, ձևաչափերի և ձևակերպումների չնչին անհամապատասխանությունների վրա՝,

և ընդհուպ մինչև Պայմանագրի ստորագրումը և ուժի մեջ մտնելը հրաժարվելով Պայմանագրից՝ առանց ստանձնելու որևէ պատասխանատվություն դրա հետևանքով տուժած Հայտատուի / Հայտատուների առջև և չունենալով ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Գնահատող հանձնաժողովի կատարած գործողությունները հիմնավորելու պարտավորություն:

5 Բաժին 5. Հայտերի ներկայացումը, ընդունումը և ստորագրումը

5.1 Բնօրինակներ, պատճեններ և Հայտի ստորագրում

5.1.1 Յուրաքանչյուր Հայտատու պետք է պատրաստի և ներկայացնի բոլոր էջերի վրա ստորագրված Հայտի մեկ բնօրինակ և Հայտի մեկ պատճենը՝ անգլերեն լեզվով, և բոլոր էջերի վրա ստորագրված Հայտի մեկ բնօրինակ և Հայտի յոթ պատճենները հայերեն լեզվով (առանց ընկերությունների ստանդարտ փաստաթղթերի, բրոշյուրներ և այլն): Հայտատուն նաև պետք է ներկայացնի երկու CD-ROM-եր, որոնցից առաջինը պետք է պարունակի Հայտատուի Տեխնիկական առաջարկի հայերեն ու անգլերեն լեզուներով էլեկտրոնային տարբերակները, իսկ երկրորդը՝ Ֆինանսական առաջարկի (ներառյալ՝ *Ֆինանսական մոդելը)* հայերեն ու անգլրերեն լեզուներով էլեկտրոնային տարբերակները: Բնօրինակի հայերեն և անգլերեն տարբերակի միջև անհամապատասխանությունների դեպքում հայերեն լեզվով բնօրինակն ունի գերակայություն:

5.1.2 Հրավերի և Պայմանագրի առնչությամբ Հայտատուի լիազոր անձը (կամ անձինք) պետք է ստորագրի (ստորագրեն) Հայտը՝

(a) Հայտի ներկայացման գրության բնօրինակի ստորագրման միջոցով, և

(b) Հայտի բնօրինակի բոլոր էջերի (բացառությամբ՝ առանց փոփոխությունների ներկայացված տպագիր նյութերի) ստորագրման միջոցով:

5.1.3 Հայտատուի անունից Հայտը ստորագրող անձի (կամ անձանց) լիազորությունը պետք է հաստատվի գրավոր Լիազորագրի ներկայացմամբ, որը պետք է ներառվի Հայտում՝ որպես *Տեխնիկական առաջարկի* Մաս V:

5.1.4 Հայտի տեքստում կատարված ցանկացած լրացում, ուղղում կամ փոփոխություն վավեր կլինի միայն Հայտի առնչությամբ Հայտատուի կողմից լիազորված անձի/ անձերի ստորագրության առկայության դեպքում:

5.2 Տեխնիկական և ֆինանսական առաջարկների կնքումը և դրոշմավորումը

5.2.1 Յուրաքանչյուր Հայտատու պետք է՝

(a) ներկայացնի Տեխնիկական առաջարկի բնօրինակը անգլերեն և հայերեն լեզուներով և Տեխնիկական առաջարկի էլեկտրոնային տարբերակները հայերեն և անգլերեն լեզուներով պարունակող CD-ROM կրիչը փակ/սոսնձված և կնքված ծրարով՝ ծրարի վրա գրելով ***«Տեխնիկական առաջարկ - բնօրինակ»*** **և** ***«Չբացել***

մինչև Հայտերի բացման նիստը» **բառերը** («Տեխնիկական առաջարկի ծրար»).

(b) ներկայացնի Ֆինանսական առաջարկի բնօրինակը հայերեն և անգլերեն լեզուներով փակ/սոսնձված և կնքված ծրարով, որդտեղ դրվելու է նաև Ֆինանսական առաջարկի (ներառյալ՝ Ֆինանսական մոդելը) հայերեն և անգլերեն լեզուներով էլեկտրոնային տարբերակները պարունակող CD-ROM-ը՝ ծրարի վրա գրելով ***«Ֆինանսական առաջարկ - բնօրինակ» և «Չբացել մինչև Ֆինանսական առաջարկների բացման նիստը» բառերը*** («Ֆինանսական առաջարկի ծրար»).

(c) կնքված *Տեխնիկական առաջարկի* և *Ֆինանսական առաջարկի* ծրարները միասին տեղադրի երրորդ ծրարի մեջ («*Արտաքին ծրար*»), որն իր հերթին պետք է սոսնձվի և կնքվի և դրա վրա պետք է գրված լինեն ***«Հայտի բնօրինակ՝ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգ»*** և ***«Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** բառերը:

5.2.2 Յուրաքանչյուր Հայտատու պետք է՝

(a) ներկայացնի *Տեխնիկական առաջարկի յուրաքանչյուր* պատճենը փակ/սոսնձված և կնքված ծրարով՝ ծրարի վրա գրելով ***«Տեխնիկական առաջարկ - պատճենը» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** **բառերը**.

(b) ներկայացնի *Ֆինանսական առաջարկի* պատճենը փակ/սոսնձված և կնքված ծրարով՝ ծրարի վրա գրելով ***«Ֆինանսական առաջարկ – պատճենը» և «Չբացել մինչև Ֆինանսական առաջարկների բացման նիստը»*** **բառերը,**

(c) *Տեխնիկական և ֆինանսական առաջարկների մեկական* փակ/սոսնձված և կնքված ծրարները տեղադրի արտաքին ծրարի մեջ, որն իր հերթին պետք է փակվի/սոսնձվի և կնքվի և դրա վրա պետք գրված լինեն ***«Հայտի պատճեն N... ՝Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգ» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը» բառերը՝*** յուրաքանչյուր արտաքին ծրարի շնորհելով համապատասխան հերթական համար,

(d) Հրավերի 5.2.1 (c) և 5.2.2 (c) ենթակետերով նախատեսված ծրարները պետք է տեղադրի մեկ ընդհանուր ծրարի կամ տուփի մեջ, որն իր հերթին պետք է փակվի/սոսնձվի և կնքվի և դրա վրա պետք գրված լինեն ***«Հայտ՝ Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգ» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը» բառերը:***

5.2.3 Հրավերի 5.2.1 և 5.2.2 կետերով նախատեսված ծրարների/տուփի վրա՝ ի հավելումն Հրավերի 5.2.1 և 5.2.2 կետերով նախատեսված գրառումների, պետք է գրված լինի նաև՝

(a) Պատվիրատուի անվանումը և Հրավերի 5.3 կետում ներկայացված հասցեն.

(b) գնման ընթացակարգի ծածկագիրը,

(c) Հայտատուի անունը / անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) և հեռախոսահամարը:

5.2.4 Եթե արտաքին ծրարներից որևէ մեկը/տուփը Հրավերի 5.2 կետի համաձայն սոսնձված և կնքված չէ, Գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում Հայտի սխալ հասցեագրման կամ վաղաժամկետ բացման համար:

5.3 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը

5.3.1 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն Հայտերը պետք է ստանա ոչ ուշ, քան Հրավերի 3.12.1 կետում ներկայացված վերջնաժամկետը: Հայտերը ներկայացվում եմ հետևյալ հասցեով՝

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
Արայիկ Մնացականյան,
Գնահատող հանձնաժողովի քարտուղար, ՀՀ ԳՆ ՋՏՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսական բաժնի պետ, վարչության պետի տեղակալ
Հայաստանի Հանրապետություն,
քաղ. Երևան, 0010 Վարդանանց փողոց 13ա
4-րդ հարկ, 401-րդ սենյակ
Հեռախոս՝ +374-10-540229, +374-91-329056
Էլ. Փոստ՝ arayik.mnatcakanyan@gmail.com

5.3.2 Գնահատող հանձնաժողովը, իր հայեցողությամբ, բոլոր Հայտատուների հանդեպ կիրառելի Անհաղթահարելի ուժի հանգամանքով չպայմանավորված դեպքերում, կարող է երկարաձգել Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ փոփոխելով Հրավերի պայմանները: Այդ դեպքում Գնահատող հանձնաժողովի իրավունքները և պարտավորությունները կերկարաձգվեն մինչև նոր վերջնաժամկետի ավարտը:

5.3.3 Հայտատուների հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ փոստով: Հայտերը չեն կարող ներկայացվել ֆաքսի կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով: Յուրաքանչյուր Հայտատու անձնական պատասխանատվություն է կրում Հայտերը Հրավերի 5.3.1 կետում նշված հասցեով ժամանակին ներկայացնելու համար՝ անկախ փոխադրման հետ կապված որևէ դժվարությունից:

5.3.4 Հայտատուի կողմից վերջնաժամկետից ուշ ներկայացված Հայտերը կմերժվեն և կվերադարձվեն առանց դրանք բացելու:

5.4 Հայտերի վավերականության ժամկետը

5.4.1 Հայտերը ուժի մեջ կգտնվեն 180 օրվա ընթացքում՝ սկսած Հրավերի 3.12.1 կետով սահմանված Հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրվանից, կամ Հրավերի 5.4.2 կետով սահմանված կարգով երկարաձգված այլ ժամկետում («Հայտերի վավերականության ժամկետ»):

5.4.2 Գնահատող հանձնաժողովը կարող է դիմել Հայտատուներին՝ ստանալու նրանց համաձայնությունը Հայտերի վավերականության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի դիմումը և Հայտատուների պատասխանները պետք է լինեն գրավոր: Հայտատուն կարող է մերժել Գնահատող հանձնաժողովի՝ Հայտերի վավերականության ժամկետը երկարաձգելու դիմումը՝ առանց կորցնելու ներկայացված Հայտի ապահովությունը: Համաձայնություն տված Հայտատուից չի պահանջվի և իրավունք չի տրվի փոփոխել իր Հայտը՝ բացառությամբ սույն Հրավերի 5.5 կետով նախատեսված դեպքերի:

5.5 Հայտի փոփոխությունը

5.5.1 Հայտատուն կարող է փոփոխել իր Հայտն այն ներկայացնելուց հետո, եթե համապատասխան փոփոխությունները Գնահատող հանձնաժողովին ներկայացվեն Հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց առաջ:

5.5.2 Հայտի փոփոխությունները Հայտատուի կողմից պետք է ներկայացվեն հետևյալ կարգով՝

(a) Հայտատուն Հայտի յուրաքանչյուր փոփոխության համար պետք է ներկայացնի (եթե կիրառելի է)՝

- Հայտի փոփոխությունների հայերեն լեզվով մեկ բնօրինակ և յոթը պատճեն,
- Հայտի փոփոխությունների անգլերեն լեզվով մեկ բնօրինակ և մեկ պատճեն,
- հայերեն և անգլերեն լեզուներով Տեխնիկական առաջարկի փոփոխությունների էլեկտրոնային տարբերակը CD-ROM-ով,
- հայերեն և անգլերեն լեզուներով Ֆինանսական առաջարկի (ներառյալ՝ ֆինանսական մոդելը) փոփոխությունների էլեկտրոնային տարբերակները CD-ROM-ով.

(b) *Տեխնիկական առաջարկի* յուրաքանչյուր փոփոխության բնօրինակը և Տեխնիկական առաջարկի համապատասխան փոփոխության էլեկտրոնային տարբերակները հայերեն և անգլերեն լեզուներով պարունակող CD-ROM կրիչը պետք է տեղադրվեն սոսնձված և կնքված ծրարի մեջ՝ ծրարի վրա գրելով ***«Տեխնիկական առաջարկ – ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ - բնօրինակ» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** բառերը.

(c) *Տեխնիկական առաջարկի* փոփոխությունների պատճեները պետք է տեղադրվեն սոսնձված և կնքված ծրարի մեջ՝ ծրարի վրա գրելով ***«Տեխնիկական առաջարկ – ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ – պատճեն N ___» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** բառերը՝ յուրաքանչյուր ծրարի շնորհելով հերթական համար:

(d) Եթե փոփոխվում է *Ֆինանսական առաջարկը* Հայտատուն պետք է ներկայացնի Գնային առաջարկի փոփոխված Ձևը («Գնային առաջարկի փոփոխված Ձև»), որի բնօրինակը և Հրավերի 4.9.5. կետով նախատեսված տեղեկությունները՝ Գնային առաջարկի փոփոխված ձևի (ներառյալ՝ Ֆինանսական մոդելը) էլեկտրոնային տարբերակները հայերեն և անգլերեն լեզուներով պարունակող CD-ROM կրիչի հետ միասին պետք է տեղադրի սոսնձված և կնքված ծրարի մեջ՝ ծրարի վրա գրելով ***«Ֆինանսական առաջարկ – ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ - բնօրինակ» և «Չբացել մինչև Ֆինանսական առաջարկների բացման նիստը»*** բառերը:

(e) *Ֆինանսական առաջարկի* փոփոխությունների պատճեները պետք է տեղադրվեն առանձին սոսնձված և կնքված ծրարների մեջ՝ ծրարների վրա գրելով ***«Ֆինանսական առաջարկ – ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ – պատճեն N ___» և «Չբացել մինչև Ֆինանսական առաջարկների բացման նիստը»*** բառերը՝ յուրաքանչյուր ծրարի շնորհելով հերթական համարը:

(f) Եթե *Գնահատող հանձնաժողովը* Հայտատուից ստանա սոսնձված և կնքված ***«Ֆինանսական առաջարկ – ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ - բնօրինակ»*** բառերով ծրարը, ապա այն կքննարկվի նախկինում ներկայացված *Ֆինանսական առաջարկի* փոխարեն, որը կվերադարձվի Հայտատուին, առանց այն բացելու:

(g) Հայտատուն պետք է տեղադրի՝

(i) *Տեխնիկական առաջարկի* փոփոխությունների բնօրինակը պարունակող ծրարը և

(ii) Գնային առաջարկի փոփոխված ձևի բնօրինակը պարունակող սոսնձված և կնքված ծրարը նոր արտաքին ծրարի մեջ՝ որի վրա պետք է գրված լինեն ***«ՀԱՅՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՕՐԻՆԱԿ - «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգ» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** բառերը:

(h) *Տեխնիկական և Ֆինանսական առաջարկների* փոփոխության պատճեններ պարունակող ծրարների մասով Հայտատուն պետք է հետևի սույն Հրավերի 5.5.2 (g) կետում նկարագրված կարգին՝ գրելով արտաքին ծրարի վրա «***Պատճեն N __ - Հայտի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ - «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալություն» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** բառերը՝ շնորհելով յուրաքանչյուր ծրարին իր հերթական համարը:

(i) Հայտատուն պետք է Հրավերի 5.5.2 կետի (g) և (h) ենթակետերով նախատեսված ծրարները պետք է տեղադրի մեկ ընդհանուր ծրարի կամ տուփի մեջ, որն իր հերթին պետք է փակվի/սոսնձվի և կնքվի և դրա վրա պետք գրված լինեն ***«Հայտ փոփոխություններ՝ Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալությամբ***

փոխանցելու գնման ընթացակարգ» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը» բառերը:

(j) Հայտերի փոփոխությունների բոլոր ծրարների վրա, ի հավելումն Հրավերի 5.5.2 (b) - 5.5.2 (i) կետերով նախատեսված գրառումների, պետք է գրված լինի նաև՝

(i) պատվիրատուի անվանումը և Հրավերի 5.3 կետում ներկայացված հասցեն.

(ii) գնման ընթացակարգի ծածկագիրը,

(iii) Հայտատուի անունը / անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) և հեռախոսահամարը:

5.5.3 Հայտատուները չեն կարող փոփոխել Հայտերը *Հայտերի ներկայացման վերջնաժամկետը* լրանալուց հետո:

5.6 Հայտի հետ կանչելը

5.6.1 Հայտատուն կարող է հետ կանչել իր հայտը այն ներկայացնելուց հետո, պայմանով, որ Հայտը հետ կանչելու մասին հայտարարությունը («*Հետ կանչելու հայտարարություն*») ստացվում է *Գնահատող հանձնաժողովի կողմից* մինչև *Հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետից* ուշ ստացված *Հետ կանչելու հայտարարությունների* պարագայում կգործի սույն Հրավերի 5.6.4 կետում սահմանված կարգը:

5.6.2 Հայտատուի Հետ կանչելու հայտարարությունը պետք է՝

(a) լինի գրավոր տեսքով,

(b) հանձնված լինի առձեռն կամ սուրհանդակային ծառայության միջոցով

(c) հասցեագրված լինի ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին սույն Հրավերի 5.3.1 կետում նշված հասցեով, և

(d) ներկայացված լինի գնման ընթացակագի ծածկագիրը, ***«ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքի վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգ» և «Չբացել մինչև Հայտերի բացման նիստը»*** բառերը, Հայտատուի անունը / անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) և հեռախոսահամարը պարունակող սոսնձված և կնքված ծրարով:

5.6.3 Հետ կանչելու հայտարարությունը կարող է ներկայացվել Հայտատուի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով կամ ֆաքսով, պայմանով, որ

դրան կիետևի փաստաթղթի ստորագրված թղթային տարբերակը, որի փոստային առաքման ժամկետը պետք է լինի ոչ ուշ, քան Հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

5.6.4 Եթե Հետ կանչելու հայտարարությունը ներկայացվում է Հայտի վավերականության ժամկետում, ապա Հայտատուն կարող է զրկվել Հայտի ապահովությունից սույն Հրավերի 4.3.6 կետի համաձայն:

6 Բաժին 6. Հայտերի բացումը և գնահատումը

6.1 Հայտերի բացումը

6.1.1 Գնահատող հանձնաժողովը բացում է արտաքին ծրարները և Տեխնիկական առաջարկների ծրարները, ներառյալ 5.5 և 5.6 կետերում նշված Փոփոխություններ և Հետ կանչելու հայտարարություններ պարունակող ծրարները Հայտատուների կամ նրանց կողմից նշանակված անձերի ներկայությամբ սույն Հրավերում սահմանված ամսաթվին, ժամին և վայրում: Հայտերի բացման նիստում որևէ Հայտ չի կարող մերժվել, բացառությամբ սույն Հրավերի 5.3.4 կետի համաձայն ուշ ներկայացված Հայտերի:

6.1.2 Այն Հայտերը, որոնք չեն բացվում և ընթերցվում հայտերի բացման նիստի ժամանակ, այլևս չեն կարող ենթարկվել գնահատման՝ անկախ որևէ հանգամանքից:

6.1.3 Բացման գործընթացին ներկա գտնվող Հայտատուները՝ իրենց ներկայությունը հաստատելու նպատակով, պետք է գրանցվեն գրանցամատյանում:

6.1.4 Գնահատող հանձնաժողովը կազմում է բացման նիստի արձանագրություն նշելով այն տեղեկությունները, որոնք բացման նիստի ժամանակ Հրավերի 6.2.2 կետի համաձայն բացահայտվել են ներկաներին:

6.1.5 Ֆինանսական առաջարկները չեն բացվում Գնահատող հանձնաժողովի կողմից մինչև Տեխնիկական առաջարկների գնահատման ավարտը: Մինչ այդ ժամանակը Ֆինանսական առաջարկը պարունակող ծրարները մնում են սոսնձված և կնքված և պահվում են անկախ պետական մարմնի պահոցում:

6.1.6 Ֆինանսական առաջարկները պետք է բացվեն հրապարակայնորեն՝ Տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքում 75 կամ ավելի միավոր ստացած Հայտատուների ներկայությամբ՝ սույն Հրավերի 6.3 կետի պահանջներին համապատասխան:

6.1.7 Ընդունելի Հայտի ապահովություն չներկայացնելու կամ տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքում բավարար միավորներ չստացած Հայտատուների Ֆինանսական առաջարկներ պարունակող ծրարները չբացված պետք է վերադարձվեն Հայտատուներին Գնահատող հանձնաժողովի կողմից:

6.2 Տեխնիկական առաջարկների բացումը

6.2.1 Գնահատող հանձնաժողովը Հրավերի 6.1.1 կետի պահանջներին համապատասխան բացում է Տեխնիկական առաջարկի ծրարները՝ Փոփոխությունների և Հետ կանչելու հայտարարությունների հետ միասին: Հետ կանչելու հայտարարություններ պարունակող ծրարները բացվում են առաջին

հերթին և դրանք ներկայացված Հայտատուների անունները բարձրաձայն ընթերցվում են: Գնահատող հանձնաժողովը համոզվում է, որ Հրավերի 5.6.4 կետի պահանջները բավարարված են: Հրավերի 5.6 կետի պահանջներին համապատասխան ներկայացված Հետ կանչելու հայտարարություններ պարունակող Հայտերը չեն բացվում: Այնուհետև բացվում են «Փոփոխություններ» նշում պարունակող ծրարները և բարձրաձայն հրապարկվում են դրանց բովանդակության անհրաժեշտ մանրամասները:

6.2.2 Հայտերի բացման նիստում Գնահատող հանձնաժողովի կողմից բարձրաձայն հրապարակվում են Հայտատուների անունները, հայտերի Փոփոխությունները և Հետ կանչելու հայտարարությունները, Հայտի ապահովության գումարները, ինչպես նաև Գնահատող հանձնաժողովի հայեցողությամբ, այլ մանրամասները:

6.3 Ֆինանսական առաջարկի բացումը

6.3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից բացվում են Ֆինանսական առաջարկներ պարունակող այն Հայտատուների ծրարները, որոնք Հրավերի 6.1.6 կետի պահանջներին համաձայն ստացել են 75 կամ ավելի միավոր և ներկայացրել են պատշաճ Հայտի ապահովություն:

6.3.2 Գնահատող հանձնաժողովը սահմանում է Ֆինանսական առաջարկների բացման ամսաթիվը, ժամը և վայրը, ինչի մասին տեղեկացնում է ընտրված Հայտատուներին:

6.3.3 Ֆինանսական առաջարկներ պարունակող ընտրված Հայտատուների ծրարները Գնահատող հանձնաժողովի կողմից բացվում են բացման նիստին ներկայացած Հայտատուների ներկայությամբ: Նիստում հրապարակվում և սահմանված կարգով արձանագրվում են ընտրված Հայտատուների անունները, նրանց Գնային առաջարկներում ներկայացված գները:

6.3.4 Ֆինանսական առաջարկների բացման նիստին մասնակցող Հայտատուների ներկայացուցիչները՝ նրանց ներկայությունը հաստատելու նպատակով, գրանցվում եմ գրանցամատյանում:

6.3.5 Ֆինանսական առաջարկների բացման նիստն արձանագրվում է Գնահատող հանձնաժողովի կողմից՝ Հրավերի 6.3.3 կետի պահանջներին համաձայն նշելով նիստում ներկա անձանց բացահայտված տեղեկությունները:

6.4 Հայտերի գնահատում

Հայտատուների Տեխնիկական և Ֆինանսական առաջարկները գնահատվում են Գնահատող հանձնաժողովի կողմից Հրավերի 6.5-ից 6.8 կետերի պահանջներին համաձայն:

6.5 Տեխնիկական առաջարկների գնահատում

6.5.1 Մինչև Տեխնիկական առաջարկների մանրամասն գնահատումը Գնահատող հանձնաժողովը պարզում է արդյոք ներկայացված առաջարկները՝

(a) ստորագրված են պատշաճ կերպով,

(b) դրանց հետ միասին ներկայացված են պահանջված երաշխիքները,

(c) դրանք համապատասխանում են Հրավերի 3.3 կետի պահանջներին, և

(d) պարունակում են որևէ պարզաբանում կամ հիմնավորում, որը Գնահատող հանձնաժողովին կարող է անհրաժեշտ լինել առաջարկի համապատասխանությունը որոշելու համար՝ Հրավերի 6.5.2 կետի համաձայն:

6.5.2 Եթե ներկայացված Տեխնիկական առաջարկը չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին, Գնահատող հանձնաժողովը տեղեկացնում է Հայտատուին նրա առաջարկի մերժման մասին:

6.5.3 Գնահատող հանձնաժողովը գնահատում է սահմանված պահանջներին բավարարող Տեխնիկական առաջարկները կիրառելով գնահատման հետևյալ չափանիշները և նշագրման համակարգը.

		Առավելագույն միավորներ
(i)	Մեթոդաբանության որակը և բիզնես ծրագիրը	
(a)	Բիզնես ծրագրի հստակությունը, ամբողջականությունը և մանրամասների ներկայացման մակարդակը, առաջարկվող մեթոդաբանության և մոտեցումների վստահելիությունը և հուսալիությունը, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում *«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք»* ՓԲԸ-ների կողմից մատուցվող ծառայությունների առկա վիճակի ընկալման աստիճանը:	20
(b)	Ինչ խորությամբ և ամբողջականությամբ է Բիզնես ծրագիրը անդրադառնում *Պայմանագրի ընդհանուր պայմանների մասում ներկայացված մատուցվելիք ծառայությունների նկարագրության (Պայմանագրի Հավելված 2)* մեջ ներկայացված ծառայությունների ամբողջականությանը:	15
(c)	Կատարողական ցուցանիշների գծով նպատակներին հասնելու Հայտատուի պատրաստակամության աստիճանը:	10
	Ընդամենը՝ Մեթոդաբանության որակ և Բիզնես ծրագիր	45

(ii) Աշխատակազմի ծրագրի որակը

(a)	Աշխատակազմի ծրագրի ընդհանուր որակը	10
(b)	Առաջարկվող աշխատողների փորձառության և մասնագիտական պատրաստվածության մակարդակը	40
(c)	Աշխատողների վերապատրաստման ծրագիրը	5
	Ընդամենը՝ Աշխատակազմի ծրագրի որակ	55

6.5.4 Հրավերի 6.5.3 (ii) (a) կետի իմաստով Աշխատակազմի ծրագրի ընդհանուր որակի մասով գնահատման հիմքում դրված է՝

(a)	Աշխատակազմի ծրագրի հստակությունը, ամբողջականությունը և մանրամասների ներկայացման աստիճանը,	4
(b)	Աշխատակազմի ծրագրում պատշաճ փորձագիտական մոտեցման ներառման աստիճանը, և	3
(c)	Որքանով է Առաջարկվող Աշխատակազմի ծրագիրը անդրադառնում Պայմանագրի ընդհանուր պայմանների մասում ներկայացված մատուցվելիք ծառայությունների նկարագրության (Պայմանագրի Հավելված 2) մեջ ներկայացված առանձնահատուկ ծառայություններին:	3

6.5.5 Հրավերի 6.5.3 (ii) (b) կետի իմաստով Առաջարկվող աշխատողների փորձառության և մասնագիտական պատրաստվածության մակարդակի գնահատման հիմքում դրված է՝

(i) Առաջարկվող աշխատողների փորձառության և մասնագիտական պատրաստվածության մակարդակը աշխատողների՝ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում, ունեցած մասնագիտական պատրաստվածությանը և աշխատանքային փորձը, համանման աշխատանքների կատարման փորձը, Հայտատուի մոտ աշխատած տարիների թիվը, զարգացող երկրներում, այդ թվում տվյալ տարածաշրջանում աշխատելու փորձը, անգլերեն և տեղական լեզվի իմացության աստիճանը: Նշվածը վերաբերում է աշխատողների հետևյալ խմբերին.

(a) Ղեկավար կազմում աշխատելու համար առաջարկվող այն անձանց, որոնք մշտապես կամ երկարաժամկետ (Պայմանագրի գործողության առաջին չորս տարիների ընթացքում 24 ամսից ավելի) կգտնվեն Հայաստանում; 35

(b) Ղեկավար անձնակազմին օժանդակող (կարճաժամկետ և գլխամասային գրասենյակում աշխատող) աշխատողներին: 5

(ii) Առաջարկվող աշխատողների փորձառության և մասնագիտական պատրաստվածության մակարդակը գնահատումը կատարվում է հետևյալ տոկոսադրույքների կիրառմամբ՝

		Առավելագույն տոկոս
(a)	Ընդհանուր որակավորում	20%
(b)	Ծրագրին համապատասխանության աստիճանը	50%
(c)	Համապատասխան փորձառություն	30%
	Ընդհանուր տոկոս.	100%

6.5.6 Տեխնիկական առաջարկի առավելագույն միավորների թիվը հավասար է 100: Ընտրված համարվելու համար Հայտատուն իր Տեխնիկական առաջարկի համար պետք է ստանա նվազագույնը 75 միավոր:

6.5.7 75 միավորից քիչ ստացած Տեխնիկական առաջարկները այնուհետև չեն դիտարկվելու և Ֆինանսական առաջարկներ պարունակող ծրարները չեն բացվելու Գնահատող հանձնաժողովի կողմից: Տեխնիկական առաջարկների գնահատումն ավարտելուց հետո Գնահատող հանձնաժողովը տեղեկացնում է նվազագույն միավորներ չվաստակած Առաջարկներ ներկայացված Հայտատուներին, որ վերջիններիս Ֆինանսական առաջարկները կվերադարձվեն նրանց գնահատումն ավարտելուց հետո:

6.6 Ֆինանսական առաջարկների գնահատում

6.6.1 Ստացված բոլոր Տեխնիկական առաջարկների հավաքած միավորների հրապարակումից հետո Գնահատող հանձնաժողովը՝ Հրավերի 6.3 կետում սահմանված կարգով հրապարակայնորեն բացում է 75 և ավելի միավոր ստացած Հայտատուների համապատասխան Ֆինանսական առաջարկները:

6.6.2 Վարձակալության յուրաքանչյուր տարվա համար Հայտատուն ներկայացնում է սակագինը Գնային առաջարկի ձևաչափով: Սակագները պետք է ճշգրտվեն ավտոմատ կերպով յուրաքանչյուր տարվա համար:

6.6.3 Ֆինանսական առաջարկները կդասակարգվեն առաջարկված նվազագույն սակագնից սկսած, աճման կարգով: Եթե Առաջարկի բնօրինակի և պատճենի միջև կան անհամապատասխանություններ գերակայությունը տրվի բնօրինակին: Գնային առաջարկի ձևաչափում ներկայացված՝ Հրավերի 6.7 կետին համաձայն փոխակերպված նվազագույն սակագինը առաջարկած պատշաճ Հայտատուն կհայտարարվի հաղթող:

6.6.4 Ֆինանսական առաջարկները կստուգվեն Գնահատող հանձնաժողովի կողմից թվաբանական սխալների առկայության մասով: Սխալները կշտկվեն հետևյալ եղանակով՝

(a) եթե կա անհամապատասխանություն թվերով և բառերով ներկայացված թվային մեծության համար, հիմք է ընդունվում բառերով գրված թվային մեծությունը.

(b) վերը նշված եղանակով ճշտված թվային մեծությունը՝ Հայտատուի համաձայնությամբ, կդիտարկվի որպես Հայտատուի կողմից ներկայացված թվային մեծություն: Եթե Հայտատուն հրաժարվում է ընդունել կատարված ուղղումները, ապա նրա հայտը կմերժվի, իսկ Հայտի ապահովությունը կարող է չվերադարձվել Հրավերի 4.3.6 կետի համաձայն:

6.7 Համեմատության համար միջին սակագնի փոխակերպումը

Հայտատուների Ֆինանսական առաջարկների գնահատման և համեմատության գործընթացը դյուրացնելու համար Ֆինանսական առաջարկներում բոլոր Հայտատուների կողմից ներկայացված տարեկան սակագները կփոխակերպվեն մեկ միջին սակագնի, կիրառելով Զուտ ներկա արժեքի (NPV) հաշվարկման գործիքը, որի միջոցով կզեղչվեն բոլոր տարիների (բացառությամբ առաջին տարվա) համար առաջարկված սակագները և դրանց հանրագումարը կբաժանվի տարիների թվի վրա: Զեղչման գործակիցը կընդունվի 8%-ին հավասար:

6.8 Հայտերի վերջնական գնահատումը

Հաղթող է ճանաչվելու նվազագույն միջին զեղչված սակագին ներկայացրած Հայտատուն: Եթե երկու կամ ավելի Հայտատու կներկայացնեն նույն սակագինը, առավելությունը կտրվի այն Հայտատուին, որի Տեխնիկական առաջարկը ստացել է ավելի բարձր միավորներ:

6.9 Գնահատող հանձնաժողովի իրավունքը Հայտերի ուսումնասիրության և պարզաբանումներ պահանջելու առումով

6.9.1 Ընտրության գործընթացի ընթացքում Գնահատող հանձնաժողովը իր հայեցողությամբ կարող է պահանջել Հայտատուից ներկայացնել

պարզաբանումներ Հայտի ցանկացած հարցի վերաբերյալ: Պարզաբանումների ներկայացումը և դրանց դիտարկումը ամենևին չի նշանակում, որ ակնկալվում, առաջարկվում կամ թույլատրում է փոփոխել Տեխնիկական կամ Ֆինանսական առաջարկները:

6.9.2 Հրավերի 6.9.1 կետի համաձայն Գնահատող հանձնաժողովը պարզաբանումներ ստանալու հարցումները պետք է կատարի գրավոր և Հայտատուն այդ պարզաբանումների հարցումներին պատասխանները նույնպես պետք է ներկայացնի գրավոր:

6.9.3 Չսահմանափակելով Հրավերի 6.9.1 կետի դրույթների ընդհանրությունը Գնահատող հանձնաժողովը կարող է՝

(a) ուսումնասիրել Հայտատուի (ներառյալ՝ կոնսորցիումի մասնակցի, առաջարկվող ենթակապալառուների կամ նրա Հայտի հետ առնչվող այլ անձանց) կարողությունները և փորձը հաստատող փաստաթղթերը / ապացույցները.

(b) պահանջել հաստատումներ Հայտատուին այլ անձերի կողմից ներկայացված տեղեկությունների մասով:

6.10 ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Գնահատող հանձնաժողովի հետ կապ հաստատելը

6.10.1 Հայտերի բացման և հաղթող Հայտատուի որոշման միջև ընկած ամբողջ ժամանակահատվածում որևէ Հայտատու իրավունք չունի դիմել ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին, կամ Գնահատող հանձնաժողովին՝ Հայտի հետ առնչվող ցանկացած հարցի առնչությամբ:

6.10.2 Հայտերի գնահատման և համեմատման գործընթացում ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, կամ Գնահատող հանձնաժողովի, ինչպես նաև նրանց աշխատողների, խորհրդատուների և գործակալների վրա ազդելու Հայտատուի կողմից ցանկացած փորձ կհանգեցնի ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և Գնահատող հանձնաժողովի կողմից նրա Հայտի մերժմանը:

6.11 Կաշառք և կեղծիք պարունակող գործողություններ

6.11.1 Հայտատուները մրցույթի և ծրագրի հետագա իրագործման ընթացքում պետք է ցուցաբերեն էթիկայի բարձրագույն հատկանիշներ: Այս առումով, սահմանվում են հետևյալ «Արգելված գործողությունները».

(i) “**Կաշառք պարունակող գործողություն**” – այլ անձի գործողության վրա ազդելը արժեքավոր որևէ իր՝ ուղղակի կամ անուղղակի եղանակով առաջարկելու, տալու, ստանալու կամ պահանջելու միջոցով;

(ii) “**Կեղծիք պարունակող գործողություն**” – անձից ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ անձի հանդեպ եղած պարտավորությունից խուսափելու նպատակով ցուցաբերել անփութություն, գիտակցաբար կամ հապճեպորեն մոլորեցնել կամ փորձել մոլորեցնել այլ անձին:

(iii) “**Բռնություն պարունակող գործողություն**” - այլ անձի գործողության վրա ազդելը նրան կամ նրա ունեցվածքին վնաս պատճառելու, կամ վնաս պատճառելու սպառնալիքներ հնչեցնելու միջոցով:

(iv) “**Դավադրություն պարունակող գործողություն**” – անազնիվ նպատակին հասնելու, կամ այլ անձ գործողությունների վրա անարդար կերպով ազդելու նպատակով երկու կամ ավելի անձերի միջև պայմանավորվածության ձեռքբերումը:

6.11.2 Կաշառք և կեղծիք պարունակող գործողությունների փաստեր բացահայտվելու դեպքում, նման գործողություններում ընդգրկված Հայտատուի Հայտը չի ընդունվի:

6.12 Շահերի բախում

6.12.1 Ցանկացած Հայտատու, նրա թիմի անդամ, աշխատող կամ խորհրդատու չպետք է ունենան ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն այլ Հայտատուի Հայտի կապակցությամբ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առաջ և դրանից հետո Հայտատուները իրավունք չունեն միմյանց միջև ձեռքբերել այնպիսի պայմանավորվածություն, որի արդյունքում Հայտատուի մոտ կառաջանա շահագրգռվածություն մյուս Հայտատուի Հայտի կապակցությամբ: Չսահմանափակելով վերը նշված դրույթների ընդհանրությունը, Հայտատուները իրավունք չունեն որպես «Ղեկավար Անձնակազմի» անդամ առաջարկել որևէ անձի, որը ներկայացված է նաև մեկ այլ Հայտատուի Հայտում: Այնուամենայնիվ, այս դրույթը չի տարածվում այն տեղական անհատ մասնագետների վրա, (որոնք չեն հանդիսանում որևէ մասնավոր կամ պետական ընկերության աշխատող), որոնց հանձնարարության ժամկետն ամբողջ պայմանագրի ընթացքում չի գերազանցում 10 ամիսը:

6.12.2 Որևէ կազմակերպություն և դրա դուստր կազմակերպությունները, որոնք ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին խորհրդատվական ծառայություններ են տրամադրել.

(a) պայմանագրային փաստաթղթերի նախապատրաստման,

(b) պայմանագրի պատրաստման կամ մշակման աշխատանքների, կամ

(c) գնման գործընթացի կազմակերպման հարցում

իրավունք չեն ունենալու ապրանքներ մատակարարել, աշխատանքներ իրականացնել կամ ծառայություններ մատուցել Հայտատուներին՝ Ընտրության գործընթացի ընթացքում կամ Վարձակալին՝ հետագայում կնքված Պայմանագրի շրջանակում:

7 Բաժին 7. Պայմանագրի կնքումը

7.1 Հաղթող ճանաչված Հայտատուն

7.1.1 Հրավերի 6.8 կետի համաձայն հաղթող է ճանաչվելու Ֆինանսական առաջարկում նվազագույն միջին գեղչված սակագին ներկայացրած այն Հայտատուն, որի Առաջարկը բավարարել է դրա նկատմամբ առկա պահանջներին:

7.1.2 Գնահատող հանձնաժողովն իր հաշվին կպարզի Հայտի ներկայացման պահից հետո Հաղթող Հայտատուի մոտ նյութական այնպիսի փոփոխությունների առկայությունը, որոնք բացասական ազդեցություն կունենան նրա կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման վրա:

7.1.3 Եթե Հայտատուի կողմից ներկայացված նվազագույն սակագինը Գնահատող հանձնաժողովի կողմից կհամարվի բարձր՝ ՀՀ կառավարության կողմից ընդունվելու համար, Գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների հրավիրել հաղթող ճանաչված Հայտատուին: Բանակցությունները հիմնականում նպատակ կունենան ՀՀ կառավարության վերահսկողության տակ գտնվող Վարձակալի ծախսերի մի մասի նվազեցման շնորհիվ հասնել ՀՀ կառավարության համար ընդունելի սակագնի մակարդակի:

7.2 Պայմանագիր ստորագրելու իրավունքի շնորհումը

7.2.1 Մինչև Հայտի վավերականության ժամկետի լրանալը Գնահատող հանձնաժողովը կավարտի Հայտերի գնահատումը և, անհրաժեշտության դեպքում, բանակցությունների վարումը: Ընտրության գործընթացի արդյունքները ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն գրավոր կտեղեկացնի հաղթող ճանաչված Հայտատուին այդ մասին:

7.2.2 Հաղթող ճանաչված Հայտատուի կողմից Հրավերի 7.4 կետով նախատեսված Կատարողական երաշխիքը տրամադրելուց անմիջապես հետո Գնահատող հանձնաժողովի կողմից մնացած Հայտատուներին կհայտնվի Հաղթող ճանաչված Հայտատուի անունը: Մրցույթին մասնակցած և հաղթող չճանաչված Հայտատուներին Հրավերի 4.3 կետի համաձայն կվերադարձվեն նրանց կողմից ներկայացված Հայտի ապահովությունները:

7.3 Վարձակալության պայմանագրի ստորագրումը

7.3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից Հաղթող ճանաչված Հայտատուին ծանուցման հետ միասին ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն Հաղթող ճանաչված Հայտատուին ուղարկում է նաև ստորագրման ենթակա Պայմանագրի նախագիծը:

7.3.2 Պայմանագրիը նախագիծը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հրավերի 7.3.1 կետի համաձայն Հաղթող ճանաչված Հայտատուն պետք է հիմնադրի և սահմանված կարգով գրանցի Վարձակալի ընկերությունը, ստորագրի պայմանագիրը՝ ստորագրելով պայմանագրի բոլոր էջերի վրա, ապահովի Պայմանագրի ստորագրումը Վարձակալի կողմից և այն վերադարձնի ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին:

7.3.3 Պայմանագիրն ուժի մեջ կմտնի Վարձակալության պայմանագրի Հոդված 3-ով նախատեսված պայմանների կատարումից անմիջապես հետո:

7.4 Կատարողական երաշխիքը

Հաղթող ճանաչվելուց հետո 30 օրվա ընթացքում Հաղթող ճանաչված Հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին Պայմանագրի նախագծով նախատեսված Կատարողական երաշխիքը: Երաշխիքի գումարը, ձևաչափը և բովանդակությունը ներկայացված են Պայմանագրի նախագծում:

7.5 Պայմանագիր չստորագրելու և Կատարողական երաշխիքը չներկայացնելու հետևանքները

Եթե հաղթող ճանաչված Հայտատուն չի կատարում Հրավերի 7.3 և 7.4 կետերի պահանջները, դա համարվում է Պայմանագրի դրույթների խախտում, ինչը հանգեցնում է պայմանագրի շնորհման վերաբերյալ որոշման չեղյալ համարելուն: Այս դեպքում ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն իրացնում է Հայտատուի կողմից ներկայացված Հայտի ապահովությամբ տրված իրավունքները և իր հայեցողությամբ Հայտատուի հանդեպ կիրառում է Պայմանագրով և Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված այլ պատժամիջոցներ: Գնահատող հանձնաժողովը, իր հայեցողությամբ, կարող է Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Հայտատուների դասակարգված ցուցակում հաջորդ տեղը զբաղեցրած Հայտատուին:

7.6 Լիցենզիա ստանալու համար դիմելու պարտավորությունը

Պայմանագիրը ստորագրելուց հետո Հաղթող ճանաչված Հայտատուի կողմից հիմնադրված Վարձակալ ընկերությունը լիցենզիայի ստանալու համար պետք է հայտ ներկայացնի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Լիցենզիա ստանալու հայտի հետ միասին ներկայացվում են Գնային առաջակում ներկայացված և Հրավերի 7.1.3 կետով նախատեսված բանակցությունների արդյունքում ձևավորված սակագները: Լիցենզիայի տրամադրումը և սակագների հաստատումը հանդիսանում են Պայմանագրի ուժի մեջ մտնելու նախապայմաններ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

Վարձակալության պայմանագրի նախագիծ
(Ներկայացվում է առանձին)

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Հայտի ապահովում (Բանկային երաշխիք)

_____
[Բանկի անվանումը, թողարկող մասնաճյուղի հասցեն]
Շահառու՝ _____ *[Պատվիրատուի անվանումը և հասցեն]*
Ամսաթիվ՝ _____
Հայտի երաշխիք No.՝ _____

Մենք տեղեկացվել ենք, որ *[Հայտատուի անունը]* (այսուհետ՝ «Հայտատու») (ամսաթիվ)____ _____ _____-ին Ձեզ է ներկայացրել իր Հայտը (այսուհետ՝ "Հայտ") «Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգին մասնակցելու համար:

Մենք տեղյակ ենք, որ Ձեր պայմաններին համաձայն Հայտի հետ միասին պետք է ներկայացվի Հայտի ապահովման երաշխիք:

Հայտատուի պահանջով մենք [*Բանկի անունը]* սույնով առանց հետ կանչելու իրավունքից պարտավորվում ենք Ձեզ վճարել *[գումարը թվերով]* (*[գումարը բառերով]*) գումարը չգերազանցող ցանկացած գումար՝ Ձեր գրավոր վճարման պահանջը ստանալուց հետո: Վճարման պահանջի հետ միասին պետք է ներկայացվի Ձեր հայտարարությունն առ այն որ Հայտատուն խախտել է իր Հայտի առնչությամբ առկա պարտավորությունները, մասնավորապես՝

(a) հետ է կանչել իր Հայտը *Հայտի վավերականության ժամկետում*, որը սահմանված է Հայտերի ներկայացման Հրավերում, կամ
(b) Չի ընդունել *Հրահանգ Հայտատուներին* փաստաթղթում (հետայսու՝ «*Հրահանգ*») հիշատակված սխալների ուղղումը, կամ
(c) ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից հաղթող ճանաչվելուց հետո *Հայտի վավերականության ժամկետում* (i) չի ստորագրել կամ հրաժարվել է ստորագրել պայմանագիրը, կամ (ii) չի ներկայացրել կամ հրաժարվել է ներկայացնել *Հրահանգում* նշված պահանջներին համապատասխանող *Կատարողական երաշխիքը*:

Սույն երաշխիքի գործողությունը կդադարեցվի՝ (a) եթե Հայտատուն ճանաչվել է Հաղթող Հայտատու, և մեզ է ներկայացվել ստորագրված Պայմանագրի և Հայտատուի հրահանգով Ձեզ ներկայացված *Կատարողական երաշխիքի* պատճենները կամ (b) եթե Հայտատուն հաղթող չի ճանաչվել (i) հաղթող ճանաչված Հայտատուի անունը Ձեր

կողմից այլ Հայտատուներին տեղեկացնելու գրությունը ստանալուց հետո, կամ (ii) Հայտի վավերականության ժամկետը լրանալուց 28 օր հետո:

Սույն երաշխիքի ներքո վճարման պահանջագիրը պետք է մեր գրասենյակում ստացվի նշված ժամկետում կամ դրանից շուտ:

Սույն երաշխիքը կարգավորվում է Միջազգային Առևտրի Պալատի (ՄԱՊ) *Ցպահանջ երաշխիքների միասնական կանոններով, ICC ձեռնարկ No 458 :*

_____

[Ստորագրություններ]

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

Գնային առաջարկի ձև

[Հայտատուի անվանումը] .....……առաջարկում է հետևյալ Բազիսային սակագները՝ ի պատասխան ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի Հրավերի: Սույն Բազիսային սակագները հիմնված են Հրավերի պայմանների վրա և կիրառվում են սպասարկման տարածի բոլոր բաժանորդների նկատմամբ: Բազիսային սակագները ներառում են ջրամատակարարումը և ջրահեռացումը (կեղտաջրերի մաքրումը) (այն չափով, ինչ չափով նշված է Հրավերում: Սակագները ներառում են Կիրառվող օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները (բացառությամբ ԱԱՀ-ի):

			Վարձակալության հաշվարկային տարիներ (i)														
			1 (2017)	2 (2018)	3 (2019)	4 (2020)	5 (2021)	6 (2022)	7 (2023)	8 (2024)	9 (2025)	10 (2026)	11 (2027)	12 (2028)	13 (2029)	14 (2030)	15 (2031)
1	Բազիսային մանրածախ սակագին, դրամ/մ3 (թվերով)	T_b															
	Բազիսային մանրածախ սակագին, դրամ/մ3 (բառերով)																
2	Մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալ, մլն մ3	V_b	123	127	131	135	139	143	148	151	155	159	162	165	168	171	174
4	Սղաճով ճշգրտվող սակագնի բաժնեմաս	ΔI_b	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%
5	Էլեկտրաէներգիայի սակագներով ճշգրտվող սակագնի բաժնեմաս	ΔEP_b	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%
6	Բազիսային սակագնի ճշգրտման չենթարկվող բաժնեմաս	ΔNAP_b	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%
7	Մեծածախ ջրամատակարարման բազիսային սակագին*	T^1_{wb}	T_{b1}*0.2	T_{b2}*0.2	T_{b3}*0.2	T_{b4}*0.2	T_{b5}*0.2	T_{b6}*0.2	T_{b7}*0.2	T_{b8}*0.2	T_{b9}*0.2	T_{b10}*0.2	T_{b11}*0.2	T_{b12}*0.2	T_{b13}*0.2	T_{b14}*0.2	T_{b15}*0.2
8	Մեծածախ ջրահեռացման բազիսային սակագին *	T^2_{wb}	T_{b1}*0.1	T_{b2}*0.1	T_{b3}*0.1	T_{b4}*0.1	T_{b5}*0.1	T_{b6}*0.1	T_{b7}*0.1	T_{b8}*0.1	T_{b9}*0.1	T_{b10}*0.1	T_{b11}*0.1	T_{b12}*0.1	T_{b13}*0.1	T_{b14}*0.1	Tb_{15}*0.1
9	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման բազիսային սակագին**	T^3_{wb}	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0

Ծանոթագրություններ:

* ՀՀ դրամ/ մ3

** ՀՀ դրամ/մ3

մ3=խորանարդ մետր

մլն մ3= միլիոն խորանարդ մետր

ՀՀ դրամ – Հայաստանի Հանրապետության դրամ

Մենք ընդունում ենք, որ Վարձակալը ստանձնում է Բաժանորդներին հաշիվներ ներկայացնելու հետ առնչվող պատասխանատվությունը և ռիսկերը:

Սույն Հայտի պատրաստման և Պայմանագրի ստորագրման (հաղթող ճանաչվելու դեպքում) հետ կապված՝ գործակալներին մեր կողմից վճարված կոմիսիոն վճարների և փոխհատուցումներ ցանկ.

Գործակալի անունը և հասցեն	Գումարը և արժույթը	Վճարման նպատակը
(չլինելու դեպքում նշել "չկա")		

_____

Հայտատուի անունը

_____

Հայտատուին ներկայացնելու իրավունք ունեցող անձի/ անձանց անունը/անունները և ստորագրությունը / ստորագրությունները

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Հայտի ներկայացման գրություն _____, _____

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
Արայիկ Մնացականյան,
Գնահատող հանձնաժողովի քարտուղար, ՀՀ ԳՆ ՋՏՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսական բաժնի պետ, վարչության պետի տեղակալ
Հայաստանի Հանրապետություն,
քաղ. Երևան, 0010 Վարդանանց փողոց 13ա
4-րդ հարկ, 401-րդ սենյակ
Հեռախոս՝ +374-10-540229, +374-91-329056
Էլ. Փոստ՝ arayik.mnatcakanyan@gmail.com՝

«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ վերաբերյալ

«Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու համար հայտարարված մրցույթի կապակցությամբ հայտնում ենք՝

(i) Մենք ուսումնասիրել են Հրավերը և հաստատում ենք, որ ստացել են Հրավերի բոլոր փաստաթղթերը.

(ii) Մենք ստացել ենք Հրավերի հետ տրամադրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրվելիք Լիցենզիան և ուսումնասիրել այն.

(iii) Մենք ստացել և ուսումնասիրել ենք Հրավերի հետևյալ հավելվածները՝

[Ծանուցում Հայտատուին՝ ներկայացնել հավելվածների ցանկն այստեղ].

(iv) Ներկայացնելով *Տեխնիկական* և *Ֆինանսական առաջարկներ* պարունակող մեր Հայտը մենք ներկայացնում են մեր պարտավորեցնող առաջարկությունը Հրավերում ներկայացված ծառայությունների և պարտավորությունների Հրավերում սահմանված պայմանների համաձայն և մեր *Ֆինանսական առաջարկում* և Հրավերում ներկայացված փոխհատուցման դիմաց.

(v) Մեր Հայտը հիմնված է Հրավերում ներկայացված պայմանների վրա: Եթե մեր Հայտում որևէ դրույթ/ հայտարարություն հակասում է Հրավերի պայմաններին, այդ դրույթը/ հայտարարությունը սույնով հանվում է.

(vi) Մեր *Ֆինանսական առաջարկում* ներկայացված գները (*Գնային առաջարկի ձև*) հիմնված են Հրավերով սահմանված պահանջների և պայմանների վրա և ներառում են Կիրառվող օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը, տուրքերը մաքսավճարները և պարտադիր այլ վճարները, բացառությամբ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ).

(vii) Ներկայացնելով սույն Հայտը մենք ներկայացնում են մեր պարտավորեցնող առաջարկությունը ապահովել մեր Հայտի *Աշխատակազմի մանրամասն ծրագիր* բաժնում ներկայացված մասնագետների ներգրավումը, կամ՝ Վարձատուի

համաձայնությամբ, համարժեք, կամ ավելի բարձր հայտանիշներով օժտված մասնագետներ Հրավերով սահմանված ծառայությունների մատուցման համար.

(viii) Մենք համաձայն ենք ընդունման համար պատրաստ պահել մեր Հայտը Հրավերում սահմանված *Հայտերի վավերականության ժամկետում.*

(ix) ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն և նրա կողմից լիազորված անձինք սույնով լիազորվում են կատարել ցանկացած ուսումնասիրություններ մեր կողմից սույնով ներկայացված հայտարարությունների, փաստաթղթերի և տեղեկությունների մասով, ինչպես նաև դիմել մեր բանկերին և գործընկերներին՝ մեր ֆինանսական և տեխնիկական վիճակի մասին տեղեկություն ստանալու համար.

(x) *[Կոնսորցիումի դեպքում]* Եթե մեզ շնորհվի Պայմանագիրը, ապա մեր կոնսորցիումի բոլոր մասնակիցները ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի հանդեպ ստանձնելու են Պայմանագրով սահմանված բոլոր պահանջները կատարելու համատեղ և համապարտ պատասխանատվություն.

(xi) ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին և նրա լիազորված ներկայացուցիչները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել հետևյալ պաշտոնյաներին[2].

Ղեկավարման և ընդհանուր բնույթի հարցեր	
Պաշտոնյա 1	Հասցե, այլ կոնտակտներ
Պաշտոնյա 2	Հասցե, այլ կոնտակտներ

Անձնակազմին վերաբերող հարցեր	
Պաշտոնյա 1	Հասցե, այլ կոնտակտներ
Պաշտոնյա 2	Հասցե, այլ կոնտակտներ

Տեխնիկական հարցեր	
Պաշտոնյա 1	Հասցե, այլ կոնտակտներ
Պաշտոնյա 2	Հասցե, այլ կոնտակտներ

Ֆինանսական հարցեր	
Պաշտոնյա 1	Հասցե, այլ կոնտակտներ
Պաշտոնյա 2	Հասցե, այլ կոնտակտներ

(xii) Սույն Հայտը ներկայացվում է հետևյալի գիտակցությամբ՝

(a) Հայտում ներկայացված բոլոր տեղեկությունները ենթակա են ստուգման.

[2] Կոնսորցիումով Հայտատուները պետք է առանձին թերթերի վրա տրամադրեն այս տեղեկությունները Կոնսորցիումի բոլոր մասնակիցների համար:

(b) ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն իրավունք է վերապահում՝

- փոփոխել Հրավերի պայմանները, որի դեպքում հայտեր կընդունվեն այն Հայտատուներից, որոնք կհամապատասխանեն Հրավերի պահանջներին,
- մերժել կամ ընդունել ցանկացած Հայտը և մերժել բոլոր Հայտերը.

(c) ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն պատասխանատվություն չի կրում վերը նշված (a) և (b) գործողությունների մասով:

(xiii) Ներքոստորագրյալներս հայտարարում են, որ Հայտում ներկայացված տեղեկությունները լրիվ են, արժանահավատ են և ճիշտ են բոլոր մանրամասների մասով:

Ստորագրություն Անուն, ազգանուն	Ստորագրություն Անուն, ազգանուն
(Հայտատուի կամ Կոնսորցիումով Հայտատուի գլխավոր մասնակցի անվանումը) անունից	(գործընկերոջ անունը) անունից

Ստորագրություն Անուն, ազգանուն	Ստորագրություն Անուն, ազգանուն
(գործընկերոջ անվանումը) անունից	(գործընկերոջ անվանումից) անունից

Ստորագրություն Անուն, ազգանուն	Ստորագրություն Անուն, ազգանուն
(գործընկերոջ անվանումը) անունից	(գործընկերոջ անվանումը) անունից

Ամսաթիվ»_____» «_____» «_____

_____

Հրավերի 5.1.3~~5.1.3~~ կետին համաձայն լիազորված անձի ստորագրությունը

Form

ՀԱՎԵԼՎԱԾ Ե

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԵՐ

(Անհրաժեշտության դեպքում Հայտատուի կողմից վերջինիս հայեցողությամբ կարող են ներկայացվել լրացուցիչ տեղեկություններ)

Հայտատուներին՝ սույն մասում ներկայացվում են տեղեկություններ Հայտատուի ընկերության կամ Կոնսորցիումով Հայտատուի մասնակիցների վերաբերյալ: Եթե՝ կազմակերպությունների նույն խմբի ներքին կառուցվածքով պայմանավորված, ներկայացված տեղեկությունները պատկանում են մայր ընկերությանը, Հայտատուին կամ Կոնսորցիումով Հայտատուի մասնակցին, դրա մասին պետք է նշվի հստակորեն: Չնշելու դեպքում դա կորակավորվի որպես «կեղծ գործողություն»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈԼՈՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԸ և ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄՈՎ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼՐԱՑՆԵՆ ԱՅՍ ՁևԱՉԱՓԸ

(Եթե Հայտատուն՝ Պայմանագրի հատուկ պահանջների կատարման համար, նպատակ ունի ներգրավել ենթակապալառուներ, հետևյալ տեղեկությունները պետք է ներկայացնել նաև ենթակապալառուների համար:)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ՁևԱՉԱՓ (1Ա)

1.	Ընկերության անվանումը	
2.	Գլխամասային գրասենյակի գտնվելու վայրի հասցեն	
3.	Հեռախոս	Պաշտոնյայի անունը
4.	Ֆաքս	էլ. փոստ
5.	Գրանցման վայրը	Գրանցման տարեթիվը

Սեփականատերերի ազգությունը		
Անուն		ազգություն
1.		
2.		
3.		
4.		
5.		

EUR համարժեք	2015	2014	2013	2012	2011
Տարեկան շրջանառություն					

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Ձև (1Բ)

ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Կոնսորցիումի բոլոր մասնակիցների անունները
1. Պատասխանատու մասնակից
2. Մասնակից
3. Մասնակից
4. այլ

Ընդհանուր տարեկան շրջանառություն՝ պատվիրատուներին ներկայացված հաշիվների տեսքով՝ եվրոյով արտահայտված, փոխարկված հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գործող փոխարժեքով:

Տարեկան շրջանառություն					
Մասնակից	2015	2014	2013	2012	2011
1. Պատասխանատու մասնակից					
2. Մասնակից					
3. Մասնակից					
4. այլ					
Ընդամենը					

ՄՇՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ – ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ
(ՄՇՏԱԿԱՆ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՅՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ , ՈՐՈՆՔ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՌԵԶԻԴԵՆՏ)

Անուն, ազգանուն	Աշխատանքային ստաժ	Ազգություն	Պաշտոն	Մասնագիտական ոլորտ

(անհրաժեշտության դեպքում շարունակել հաջորդ էջի վրա)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Ձև (2B)

ՄԱՍՆԱԿԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անուն, ազգանուն	Պայմանագրի առաջին 4 տարիների ընթացքում ամիսների ինդիկատիվ թիվ	Ազգություն	Պաշտոն	Ոլորտներ և փորձառության տևողություն

(անհրաժեշտության դեպքում շարունակել հաջորդ էջի վրա)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Ձև (3)

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի կամ կոնսորցիումի մասնակցի անունը

Հայտատուները, ներառյալ Կոնսորցիումով Հայտատուների յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնեն տեղեկություններ վերջին 5 տարիների (2011 թ. հունվարի 1-ից մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը) ընթացքում կատարված կամ ներկայումս ընթացքի մեջ գտնվող պայմանագրերի առնչությամբ կայացած դատական գործընթացների մասին: Կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի համար լրացվում է առանձին թերթիկ:

Տարի	Հայտատուի օգտին կամ դեմ կայացված որոշումը	Դատական քննության մյուս մասնակցի անունը, վեճը դատական կարգով լուծելու պատճառը, վեճի առարկան	Վիճարկվող գումարի անվանական արժեքը եվրոյով

ՀԱՎԵԼՎԱԾ Զ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ (CV) ՁԵՎԱՉԱՓ

CV-ի ձևաչափը առաջարկվող մասնագետների համար

Առաջարկվող պաշտոնը. _____

Հայտատուի անվանումը. _____

Աշխատողի անունը. _____

Մասնագիտությունը. _____

Ծննդյան ամսաթիվը. _____

Հայտատուի մոտ աշխատած տարիների թիվը. _____

Քաղաքացիությունը. _____

Մասնագիտական միավորումներին անդամակցությունը. _____

_____

Հանձնարավող առաջադրանքների մանրամասն նկարագիրը. _____

_____

Հիմնական մասնագիտական որակավորումները.

[*Համառոտ ներկայացրեք աշխատակազմի անդամի փորձը և պատրաստվածությունը, որոնք առավելագույն առնչություն ունեն առաջադրանքի ներքո կատարվելիք խնդիրների հետ: Նկարագրեք նախորդ նման առաջադրանքներում աշխատակազմի անդամի կողմից ստանձված պատասխանատվության աստիճանը, նշելով ամսաթվեր և վայրեր: Օգտագործեք մոտ կես էջ:*]

_____

Կրթությունը.

[*Ամփոփեք աշխատակազմի անդամի քոլեջի/համալսարանի կամ այլ մասնագիտական կրթությունը, նշելով ուսումնական հաստատությունների անվանումներ, հաճախելու ամսաթվեր և ստացված աստիճաններ: Օգտագործեք մոտավորապես մեկ քառորդ էջ:*]

_____

Աշխատանքային փորձ.

[*Սկսելով ներկա պաշտոնից, ետընթաց կարգով թվարկեք յուրաքանչյուր զբաղեցրած աշխատանքային պաշտոն: Թվարկեք ուսումն ավարտելուց հետո աշխատակազմի անդամի կողմից զբաղեցրած բոլոր պաշտոնները, նշելով ամսաթվերը, գործատու կազմակերպությունների անվանումները, զբաղեցված պաշտոնների անվանումները և առաջադրանքների կատարման վայրերը: Վերջին տասը տարվա փորձի համար ի լրումն դրան նշեք կատարված աշխատանքի տեսակներ և հնարավորության դեպքում՝ պատվիրատուների տվյալները: Օգտագործեք մոտ երկու էջ:*]

Լեզուներ.

[Յուրաքանչյուր լեզվի համար նշել տիրապետման աստիճանը՝ գերազանց, լավ, բավարար, անբավարար՝ խոսակցականի, ընթերցման և գրավորի առումով]

Վավերացում՝

Ես, ստորև ստորագրողս, հաստատում եմ, որ ներկայացված տեղեկությունները օբյեկտիվորեն նկարագրում են ինձ, իմ մասնագիտական հատկանիշները և աշխատանքային փորձը: Ես հաստատում եմ նաև տվել եմ իմ թույլտվությունը սույն CV-ին (…*Հայտատուի անունը*…) Հայտում ներառելու համար:

_____ Ամսաթիվ՝ _____

[Մասնագետի և Հայտատուի լիազոր ներկայացուցչի ստորագրությունները

_____

Մասնագետի անունը, ազգանունը _____

Հայտատուի լիազոր ներկայացուցչի անունը, ազգանունը _____

ՀԱՎԵԼՎԱԾ Է

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՁԵՎԱՉԱՓ

Հայտատուի ֆինանսական մոդելը

Հայտատուն պետք է ներառի իր Հայտի մեջ ֆունկցիոնալ ֆինանսական մոդելը (CD ROM-ով և տպագրված տարբերակով) որպես Հրավերի 4.9~~4.9~~ կետով նախատեսված *Ֆինանսական առաջարկի* մաս: Հայտատուի ֆինանսական մոդելը պետք է մշակված լինի 2007 թ. կամ ավելի տարեթվին թողարկված MS EXCEL ծրագրով՝ մեկ առանձին ֆայլով: Մոդելը պետք է թույլ տա կրկնել անհրաժեշտ բոլոր հաշվարկները: Մոդելը պետք է լինի հայերեն և անգլերեն լեզուներով, հաշվարկներում օգտագործվող արժույթը ՀՀ դրամն է:

Մոդելի կառուցվածքը

Հայտատուի մոդելը պետք է ունենա *Հայտի գնային առաջարկի,* ֆինանսական կանխատեսումների և ֆինանսական հոսքերի ձևավորման համար բոլոր անհրաժեշտ հաշվարկները պարունակող MS Excel աղյուսակներ: Այն պետք է պարունակի ստորև նկարագրված տեղեկատվությունը ներառող աղյուսակներ:

Հաշվարկների կատարման ձևաչափը պետք է համատեղելի լինի հաշվարկների համար անհրաժեշտ այլ Excel աղյուսակների հետ: Excel աղյուսակները պետք ակտիվ կերպով կապված լինեն Ֆինանսական մոդելի մնացած մասերի հետ և ներկայացված լինեն ամբողջությամբ ֆունկցիոնալ կարգավիճակում:

Հայտատուի մոդելը պետք է կառուցված լինի այնպիսի եղանակով, որ կանխատեսումները կատարվեն տարեկան կտրվածքով և սկսվեն Պայմանագրի ուժի մեջ մտնելու տարեթվից (2017 թ.) և վերջանան 15 տարի անց՝ պայմանագրի ժամկետի ավարտին:

Հայտատուն պետք է ներկայացնի ֆինանսական մոդելի աշխատանքի մանրամասն նկարագրություն, բացահայտելով մոդելի ընդհանուր կառուցվածքը, ծրագրի օգտագործված տարրերի աշխատանքը և դրանց օգտագործման կարգը, մասնավորապես բացահայտել ծրագրում հաշվարկների կատարման համար օգտագործված մակրոները (macros) և բարդ բանաձևերը (complex formulae): Ներկայացված նկարագրությունները և բացահայտումները պետք է մանրամասն կերպով նկարագրեն սկզբնական պարամետրերի փոփոխության դեպքում ընդհանուր մոդելի կիրառման ընթացքը, սակագների՝ տարբեր բաղադրիչների մասով զգայունակության (sensitivity) որոշումը:

Հայտատուի մոդելը պետք է կազմված լինի հայտնի լավագույն ստանդարտներին համապատասխան, ապահովելով մասնավորապես համակարգի՝

- Արդյունավետությունը և ճշգրտությունը, օրինակ՝
  - Ներկառուցված "ԵԹԵ" (nested IF) ֆունկցիաների փոխարեն օգտագործել տրամաբանական (logical) օպերատորներ;
  - Չկիրառել հաստատուն թվերի տեղադրումը հաշվարկային հիմնական բանաձևերի մեջ (hard coding), փոխարենը դրանք օգտագործել սկզբնական աղյուսակներում:

- խստորեն առանձնացնել / առանձնացնել մուտքային, ելքային և պահեստային / օժանդակ հաշվարկների համակարգերը

- Կայունությունը, օրինակ՝
  - Բանաձևերը պետք է չփոխվեն տողի մեջ.
  - Մոդելի բոլոր աղյուսակները պետք է ունենան նույն ձևաչափը.
  - Աղյուսակների սյունյակները պետք է համանման լինեն՝ ծրագրի ժամանակահատվածների առումով.
  - Աղյուսակների տողերով սյունյակները պետք է համանման լինեն ամսեկան և տարեկան ժամանակահատվածների համար:

- Ճկունությունը, օրինակ՝
  - Զգայունակության (sensitivity) հաշվարկումը պետք է հնարավոր լինի հաշվարկել ցանկացած պահին՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում.
  - Մանրամասն տվյալների մուտքագրումը անհրաժեշտ չէ տնտեսական կամ տեխնիկական կանխատեսումների թարմացման համար.
  - Մոդելը չպետք է աշխատի «Փակ արկղի» (“black box”) սկզբունքով (մասնավորապես՝ հաշվարկների կատարման բարդ մակրոների (macros) միջոցով):

- Մատչելի աուդիտի հնարավորություն, օրինակ՝
  - Օգտագործված բարդ բանաձևերի համար մանրամասն մեկնաբանությունների առկայություն.
  - Բարդ բանաձևերի բացվածքների ապահովում.
  - Ելքային հաշվարկները պետք է կապված չլինեն մուտքային տվյալների հետ.
  - Մուտքային տվյալների համար նախատեսված դաշտերը պետք է առանձնացված լինեն հաշվարկների համար նախատեսված դաշտերից.
  - Մակրոների համար պետք է լինեն մանրամասն մեկնաբանություններ, իսկ դրանց անվանումները պետք է հստակորեն նկարագրեն դրանց գործողությունները:

- Դյուրին օգտագործեի, օրինակ՝
  - Պարզ on-screen մեկնաբանություններ.
  - Ֆինանսական հաշվետվությունները պետք է մշակված լինեն միջազգային հաշվապահական ստանդարտներին համապատասխան.
  - Պետք է բացակայեն ֆայլերի, աղյուսակների և այլնի ծածկագրերը, կամ օգտագործման ժամանակային սահմանափակումները:

Արդյունքներ

Ֆինանսական կանխատեսումների աղյուսակները պետք է ներառեն առնվազն հետևյալ հաշվետվությունների ձևերը՝

- Ֆինանսական հոսքերի հաշվետվություն,
- Հաշվետվություն շահույթի/ վնասի վերաբերյալ (Profit & Loss account),
- Հաշվեկշիռ:

Նշված ֆինանսական կանխատեսումները պետք է ներկայացված լինեն տարեկան կտրվածքով:

Հայտերի գնահատման ժամանակ *Գնահատող հանձնաժողովը* կարող է օգտագործել իր գնահատման մոդելը: Հայտատուի Ֆինանսական մոդելում ներկայացված որևէ ոչ իրատեսական գնահատականի առկայության դեպքում, որը կարող է էապես ազդել Հայտատուի Ֆինանսական առաջարկի վրա, Գնահատող հանձնաժողովը Հայտատուից կարող է պահանջել համապատասխան պարզաբանումներ: Հայտատուի կողմից ներկայացված պարզաբանումները Գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում Հայտը կարող է մերժվել:

Անհրաժեշտ ձևաչափեր

- Հավելված Գ – Գնային առաջարկի ձև
- Ձևաչափ G1: Ջրի արտադրություն
- Ձևաչափ G2: Շահագործման և պահպանման ծախսեր
- Ձևաչափ G3: Անձնակազմ և աշխատավարձեր

Ձևաչափ G1: Ջրի արտադրություն

	Միավոր	Y1	Y2	Y3	Y4	Y5	Y6	Y7	Y8	Y9	Y10	Y11	Y12	Y13	Y14	Y15
Ջրային ցանցին մատակարարվող ջուրը	1000 մ3															
Պոմպերի միջոցով	1000 մ3															
Ինքնահոսով	1000 մ3															
Էլեկտրաէներգիայի սպառումը	1000 կՎտ.ժ															
Ջրի կորուստները	1000 մ3															
Սպառողներին մատակարարվող ջուր	1000 մ3															
Բնակչություն	1000 մ3															
Բյուջետային կազմակերպություններ	1000 մ3															
Առևտրային կազմակերպություններ	1000 մ3															
Մեծածախ ջրի սպառողներ	1000 մ3															
Ջրահեռացում	1000 մ3															
Բնակչություն	1000 մ3															
Բյուջետային կազմակերպություններ	1000 մ3															
Առևտրային կազմակերպություններ	1000 մ3															
Մեծածախ ջրի սպառողներ	1000 մ3															
Կեղտաջրերի մաքրում	1000 մ3															
Բնակչություն	1000 մ3															
Բյուջետային կազմակերպություններ	1000 մ3															
Առևտրային կազմակերպություններ	1000 մ3															
Մեծածախ ջրի սպառողներ	1000 մ3															

Ձևաչափ G2: Շահագործման և Պահպանման ծախսերը (Շ&Պ)

	Միավոր	Y1	Y2	Y3	Y4	Y5	Y6	Y7	Y8	Y9	Y10	Y11	Y12	Y13	Y14	Y15
Շ&Պ ծախսերի ընդհանուր գումարը*	**1000 ՀՀ դրամ**															
Աշխատավարձեր	1000 ՀՀ դրամ															
Պարգևատրումներ և դրանց հավասարեցված վճարներ	1000 ՀՀ դրամ															
Նյութեր	1000 ՀՀ դրամ															
Էլեկտրաէներգիա	1000 ՀՀ դրամ															
Ընթացիկ նորոգում	1000 ՀՀ դրամ															
Ղեկավարման ծախսեր	1000 ՀՀ դրամ															
Անվտանգություն ծախսեր	1000 ՀՀ դրամ															
Բնօգտագործման վճարներ	1000 ՀՀ դրամ															
Շրջակա միջավայրի վճարներ	1000 ՀՀ դրամ															
Այլ ծախսեր	1000 ՀՀ դրամ															

*) առանց ԱԱՀ-ի

Ձևաչափ G3: Անձնակազմը և աշխատավարձերը

	Միավոր	Y1	Y2	Y3	Y4	Y5	Y6	Y7	Y8	Y9	Y10	Y11	Y12	Y13	Y14	Y15
Աշխատողների ընդհանուր թիվը	մարդ															
Վարչական աշխատողների թիվը	մարդ															
Արտադրության աշխատողների թիվը	մարդ															
Մատակարարման ստորաբաժանման աշխատողների թիվը	մարդ															
Ընդհանուր միջին ամսական աշխատավարձը	ՀՀ դրամ															
Միջին ամսական աշխատավարձը վարչական աշխատողների համար	ՀՀ դրամ															
Միջին ամսական աշխատավարձը արտադրության աշխատողների համար	ՀՀ դրամ															
Միջին ամսական աշխատավարձը կոմերցիոն աշխատողների համար	ՀՀ դրամ															